



Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԶԻՆԱԿԱՆ ՊԱՏՄԿԱԾՔՆԵՐ

ՀԱՅՊԵՏԿՐԱՏ

ՄԱՂԱԹԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ջ Ի Ն Ա Կ Ա Ն
Պ Ա Տ Մ Վ Ա Ծ Ք Ն Ե Ր

Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՀԼԿԵՄ ԿՆՆՏԻՈՄԻՆ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1949



CH. 11. 17

1847-1848

Նկարիչ՝ ՎԱՋԵ ՔԵՎԱՆՅԱՆ

Տ. ԱՐՄԵՆՅԱՆ

КИТАЙСКИЕ РАССКАЗЫ

(Նա արմանեակոմ յաշկե)

Արմգիւ. Երեւան. 1949



ԹԻ ԹԱՆՈՒ

Թի Թա-նոն հիմա արդեն տասնմեկ տարեկան է, ամուսինի նման սե ու փայլուն մազերով: Նրա հայրը՝ Լի Չային ծովից ձուկ է որսում և նրանով կերակրում իր միակ աղջկան: Ծերունի ձկնորսը հիմա իր վիճակից գոհ է: Նա ունի իր սեփական ուռկանը և ազատ կարողանում է ձկնորսությամբ զբաղվել:

Մի ժամանակ, երբ դեռ ճապոնացիներն էին նրանց երկրի տերը, ծերունի Լի Չային իրավունք չունեի ծովից ձուկ որսալու: Այն ժամանակ դեռ կենդանի էին

Թի Թա-Նոյի մայրը և երեք եղբայրները: Նրանք ապրում էին մի փոքրիկ, մութ ու խարխուլ տնակում, որտեղ գիշերները հագիվ էին տեղավորվում:

Լի Չային աշխատում էր մի հարուստ ճապոնացու գործարանում և ստանում էր շաբաթական ութ հարյուր դրամ բրինձ ու երկու կիլոգրամ ձուկ: Նրանք այդ բոլորը ուտում էին երկու օրում, իսկ մնացած օրերը քաղցած էին մնում:

Մի օր էլ Թի Թա-Նոյի հորը գործարանից դուրս արեցին, որովհետև նա փորձել էր բողոքել աշխատավարձը պակասեցնելու դեմ: Լի Չայիի ամբողջ ընտանիքը սովի մտանվեց: Նրանք ամեն օր առավոտյան իջնում էին ծովափ, հավաքում էին դանադան ծովային մանր կենդանիներ և ուտանց եփելու ուտում: Այդպես էր անում նաև փոքրիկ Թի Թա-Նոն:

Գնալով դրությունը ծանրանում էր: Գյուղում հիվանդություն տարածվեց, որից մեռան Թի Թա-Նոյի մայրն ու երեք եղբայրները:

Ճապոնացիները աղքատիկ պես ծծում էին հազարավոր չինացիների արյունը: Չինացիների ապրուստի միակ հույսը ծովն էր, այն էլ ձկները ճապոնացիներն էին տանում, իսկ նրանց թողնում միայն խեցեփայլներ, խիտուններ և մեղուղաներ:

Մի օր էլ... Այդ երեք չի մոտանա փոքրիկ Թի Թա-Նոն... Մերունի Լի Չային ուրախ ներս մտավ տնակ, գրկեց փոքրիկ Թի Թա-Նոյին և դուրս եկավ փողոց: Ուրախ էր Լի Չային: Թի Թա-Նոն երեք նրան տյուֆան ուրախ չէր տեսել: Ողջ գյուղը փողոց էր թափվել: Գյուղացիները ողևորված բացազանչում էին:

— Շանգո՛, չանգո՛... (Շատ լավ, շնորհակալություն):

փոքրիկ թի թա-նոն նույնպես իր բարակ ձայնով
սկսեց կանչել։

— Շանգո՛ :

Այդ օրը «շանգո՛» էր կանչում ամբողջ Մանջու-
րիան։

Մեր զորամասը կանգ տուավ Յուբայ-Փանծա գյու-
ղում։ Մեզ չըջապատել էր ողջ գյուղը։ Մեծ ու փոքր
բացազանչում էին։

— Շանգո՛ . . .

Այստեղ էս տեսա մի բրոնզափայլ դեմքով ծերու-
նու, որի գրկում մի ութ-ինը տարեկան աղջիկ ան-
ընդհատ վեր-վեր էր թռչում և իր բարակ ձայնով
բացազանչում՝ «շանգո՛»։ Երբ էս մոտեցա նրան և
գիմելով փոքրիկ աղջկան հարցրեցի նրա անունը, նա
իր թեք, սև աչքերը փայլեցնելով ճչաց։

— Շանգո՛ . . .

Հայրը, որ մի քիչ ուռսերեն գիտեր, ասաց, որ
թի թա-նո է նրա անունը։

Մենք երկար մնացինք Յուբայ-Փանծա գյուղում։
Ճապոնացիներից խլեցինք ձկնագործարանը, բրնձի և
դեղնաանջի արտերը և վերադարձրինք չինացիներին։


Այդ ժամանակ էս շատ մոտիկից ծանոթացա ծե-
րունի Լի Չայիի և նրա փոքրիկ աղջկա՝ թի թա-նոյի
հետ։

Հիմա արդեն ծերունի Լի Չային սւնի իր սեփական
ուռկանն ու նավակը և զբաղվում է ձկնորսությամբ։

Երեկոները, երբ Լի Չային ձկնորսությունից տուն

է դառնում, հայր ու աղջիկ վերհիշում են Սովետական
Բանակի մարտիկներին և ամեն անգամ կրկնում.
— Շանգո՛՛ . . .





ՊԱՏՄՎԱԾՔ ԼԻ ՎԱՆ-ՅՈՒԻ՝ ՓՈՔՐԻԿ ԶԻՆԱՅՈՒ ՄԱՍԻՆ

Լի Վան-Յուն հիմա ապրում է հեռո՛ւ-հեռո՛ւ,
Դեղին ծովի ափին: Նա տասնմեկ տարեկան է և իր
խարխուլ խրճիթում մենակ է ապրում:

Լի Վան-Յուն մայրը մեռավ Ժանտախտից, երբ նա
երկու տարեկան էր, իսկ հորը՝ Վան Յու-Բեյին սպանե-
ցին մի տարի առաջ մի բռու բրնձի համար: Այո՛, մի
բռու բրնձի համար: Գուցե զարմանալի թվա ձեզ, որ մի
բռու բրնձի համար մարդ են սպանել, բայց այդ ճշմար-
տություն է, որ տեղի ունեցավ այսպես:

Լի Վան Յուն հայրը վաթսուներե անց մի ծերունի
էր: Նա սուր հողացավի սրտածառով դամված էր ան-
կողմին: Տանից դուրս էր գալիս միայն ամիսը մեկ
անգամ և հենվելով իր ձեռնափայտին օրորվելով գնում
էր շուկա, իր հին բարեկամներից մեկի՝ Զի Զի-Լյայի
մոտ, որը քաղաքում մի փոքրիկ թեյարան ուներ:

Նրանք նստում էին թեյարանի առջև, սափերում, փայտե նստարանի վրա և երկար զրուցում: Երեկոյան Վան Յու-Ֆեյը հրաժեշտ էր տալիս Չի Չի-Լյային և վերադառնում տուն, հետը բերելով իր հին բարեկամի նվերը՝ մի ավաե խաչած բրինձ: Հայր ու որդի ուտում էին այդ խաչած բրինձը և օրհնում բարերար Չի Չի-Լյային: Այսպես, ամիսը մի անգամ նրանք բրինձ էին ուտում և այդ օրը նրանց տանը տոն էր լինում: Այնուհետև մինչև ուշ գիշեր հայրը պատմություններ էր անում Յուին, սովորեցնում էր նրան ծովերի պաղանիքները և պատմում Չան Չոնի՝ Չինական պատի մասին, ազատության ու հարստության մասին, պատմում էր Չոան Սիի՝ քաջ ձկնորսի մասին, որը երկու հազար տարի է՝ ինչ գնացել է ազատության ետևից և միայն երկու հազար տարի հետո պիտի գա: Այստեղ Վան Յու-Ֆեյը լաց էր լինում: Լալիս էր նաև Յու: Ծերունին հիշում էր իր ավագ որդուն՝ Լի Վան-Չանին, որ երկու տարի էր, ինչ հանկարծ անհայտացել էր: Հայր ու որդի սկզբում կարծում էին, թե նա խեղդվել է ծովում: Բայց մի օր էլ, երբ առավոտյան Յուն տանից դուրս եկավ, խրճիթի դռան մոտ կանգնած էին երկու ոստիկան: Նա վախեցած մտավ խրճիթ: Ներս մտան նաև ոստիկանները և սկսեցին հարց ու փորձ անել Չոնի մասին: Հայր ու որդի, իրոք, չգիտեին նրա տեղը, բայց ոստիկանները երկուսին էլ մարտկով ծեծեցին և սպառնալով հեռացան: Ծերունի Բեյը հասկացավ, որ Չանը ամենևին էլ ծովում չի խեղդվել, այլ անցել է Ժողովրդական բանակի կողմը, որի համար շատ ուրախացավ:

Այսպես, հայր ու որդի ապրում էին ծովափնյա խրճիթում, սնվում էին մեղուղաներով և ծովային խխունջներով, խսկ պիչերները միակ աղքատիկ անկողնի վրա կուչ եկած՝ յաժը ձայնով երկար խոսում էին Չոնի մասին և սպասում նրա վերադարձին՝ ապա-

նաություն բերող թողութեան բանակի հետ միասին։
Եվ ամիսը մեկ անգամ նրանք խաչած բրինձ էին
ուտում, որ նվիրում էր նրանց Վան Յու-Ֆեյի հին
բարեկամը՝ բարերար Ձի Ձի-Լյան։

Մի օր էլ Վան Յու-Ֆեյը առաջին անգամ դատարկ
վերադառնում էր Ձի Ձի-Լյայի մոտից։ Նրա թեյարու-
նում ուտիկաններ էին հավաքվել և քրքրում էին թե-
յարանն ու խոհանոցը։ Ձի Ձի-Լյան նկատելով իր բա-
րեկամին, մի կերպ հասկացրեց, որ վերջինս հեռանա,
և Վան Յու-Ֆեյը ձեռնունայն առն էր դառնում։

Հանկարծ նա տեսավ ճանապարհի եզրին կանգնած
մի բեռնատար ավտոմեքենա, որից զինվորները դա-
տարկում էին բրնձով լի պարկերը և կրում մոտակա
չենքը։ Վան Յու-Ֆեյը նկատեց, որ մեքենայի անիվնե-
րի մոտ մի քանի բուռ բրինձ է թափված։ Մոտակա
տներից հավաքված հավերը կացահարում էին բրինձը
և քուջուջ անելով խառնում հողին։ Նա հիշեց իր Լի
Վան-Յուին, որ արդեն մեկ ամիս էր, ինչ խնամքից ու
մեղուգայից բացի ոչինչ չէր կերել և անհամբեր սպա-
սում էր իր վերադարձին։ Հիշեց և սիրտը մղկատաց։ Նա
անփափով մոտեցավ մեքենային և գետնից վերցրեց մի
բուռ հողախառն բրինձ։

Միայն մի բուռ... Եվ դեռ չէր ուզվել իր ցափած
մեջքը, երբ քունքին մի ուժեղ հարված զգաց։ Աչքերը
մթնեցին, և նա վայր ընկավ մեքենայի անիվների մոտ։

Փայտի անտաշ կտորով հարվածող գոմինդանական
սպան ոտքով ուժեղ հարվածեց նրա կողքին, բայց Վան
Յու-Ֆեյը այլևս չբարձրացավ։

Յուն երկար սպասեց հորը, բայց նա չեկավ։
Մինչև լուսադեմ նա չքնեց, իսկ լուսարացին շտա-
պեց շուկա՝ հորը փնտրելու։ Ճանապարհի կողքի փո-
սում նա դատավ հոր անչնչացած մարմինը և երկար լաց
կրավ։

Չի Չի—Լյայլի օգնութեամբ նա թաղեց Վան Յու-
բեյին և մենակ վերադարձաւ իր ծովափնյա խրճիթը:



Չինաստանում ծանր էր երեխաների վրաւթյունը: Նրանք մերկ էին ու քաղցած, զրկւած սովորելու հնա-
րավորութեանից, խելորբի վիճակը առաւել անտանելի
էր: Լի Վան-Յուն, որ ծնողների կենդանութեան ժամա-
նակ էլ լսով օր չէր տեսել, հիմա արդեն կործանման
կղերին էր կանգնած: Սմեն երեկո դառը մեղուզայով
կերակրւելուց հետո պառկում էր քնելու և մթութեան
մեջ լաց էր լինում: Նա լսով գիտեր, որ մեղուզայով
ապրել չի լինի: Բայց ի՞նչ կարող էր անել խեղճ աղան:

Յերեկները Լի Վան-Յուն գնում էր ծովափ, որտեղ
հալածւում էին իր նման հարյուրավոր ստաւորիկ,
կիսամերկ երեխաներ: Նա և իր ընկերները կապւած
էին ծովի հետ, ինչպէս կաթնասու մոր հետ: Նրանք
ամեն օր առաւօտյան գնում էին ծովափ, երկար ձողի
զույգ ծայրերին մեկական ծղոտե զամբյուղ կախած և
կշեռքի նման ուսներին դրած: Մակընթացութեան
սկսւելուն պէս նրանք երկար երկաթե կեռերը ձեռքնե-
րին սպասում էին ծովի նվերներին: Եւ ծովը նրանց
չէր խաբում: Օ՛, ծովը բարի էր, բարի էր բոլորից: Եւ
ահա ալիքների հետ դեպի ափ էին լողում հովանոցաձե
թափանցիկ մեղուզաները: Փոքրիկ որսորդներն սպա-
սում էին մինչև մեղուզաներն այնքան կմոտենային
ափին, որ հնարավոր լիներ երկաթե կեռով սպանել
նրանց և դուրս քաշել: Երեկոյան մեղուզաների լսւը-
ծուն կտորներով և խխունջներով բեռնավորւած նրանք
վերադառնում էին տուն:

Մի գիշեր Լի Վան-Յուն գողէրոցք ուներ և չէր
կարողանում քնել: Դրսում սոսկալի ցուրտ էր, հորդ
անձրև էր տեղում: Ծովը կատաղի մռնչում էր: Այդ

մանչյունից Յուլի սիրտը կարտավում էր: Հոր պատմությունից նա գիտեր, որ ամեն անգամ, երբ ծովը այդպես փոթորկվում է, դժբախտություն է պատահելու, և վախից ու տենդից չէր կարողանում քնել:

Հանկարծ խրճիթի պատի մոտ ոտնաձայներ լսվեցին: Յուն լսողությունը լարեց: Չէր սխալվում: Ոտնաձայները մոտենում էին դռանը: Ովքե՞ր էին, ի՞նչ էին ուզում: Նա սարսուփահար կուչ եկավ: Դուռը կամացուկ բախեցին: Բախոցը կրկնվեց, այս անգամ ավելի ուժեղ:

— Յո՛ւ, Յո՛ւ, սրտեղ ես, Յու, — հասավ նրա սկանջին: Չայնը ծանոթ էր երևում: Կամաց, մթության մեջ խարխալելով նա մոտեցավ դռանը՝ ձայնը ավելի լավ լսելու համար:

— Յո՛ւ, բաց արա դուռը, այդ ես եմ՝ Չանը, — պարզ լսեց նա եղբոր ձայնը: Յուն ուրախությունից և աստուծոյից չզրկուեց ինչ աներ. ձեռքերը դողում էին և չէր կարողանում փականը դնել: Վերջապես նա բաց արեց դուռը: Դռան մեջ երևացին երեք զինված մարդիկ: Նրանցից մեկը Յուլի եղբայրն էր՝ Չանը: Յուն մթության մեջ էլ անմիջապես ճանաչեց եղբորը և ճշտով ընկավ նրա գիրկը:

— Չա՛ն, Չա՛ն, — բացառանչեց նա և սկսեց դուռն փակել:

Չանը Յուլին դրկած խրճիթ մտավ: Ներս մտան նաև նրա ընկերները: Յուն երջանկությունից կորցրել էր իրեն: Հարազատ եղբոր գրկում նա գլուխ էր իրեն երանության մեջ և ոչ մի խոսք չէր կարողանում արտասանել: Նա միայն երեսը քսում էր Չանի ղեմքին և հեկեկում: Վերջապես Չանը նրան հանգստացնելով դրկից իջեցրեց և մոտեցավ օջախին, որ վառել էին նրա ընկերները: Նրանք սկսեցին չորացնել իրենց թրջված հագուստները: Այնուհետև նրանք չորսով ընթրեցին: Յուն առաջին անգամ իր կյանքում ձկան սպառածն էր:

բաւ: Նա սկսեց եղբորը պատմել հոր մասին, բայց պարզվեց, որ Չանը ամեն ինչ գիտէ:

Այդ գիշեր Յուն շատ բան լսեց և շատ բան հասկացաւ: Նա հորից արդեն լսել էր աշխարհի անարդարությունների մասին, լսել էր, որ քաջ ձկնորս Չոան Սին երկու հազար տարի առաջ գնացել էր Չինական պատերից և օվկիանոսներից այն կողմ ազատություն բերելու և դեռ երկու հազար տարի կա մինչև նրա վերադարձը: Բայց այսօր նա իմացաւ, որ իր եղբայր Չանը նրանից շուտ արդեն ազատությունը բերել և հասցրել է իրենց քաղաքին: Նա իմացաւ, որ շուտով, շատ շուտով ազատ կլինեն, Խուան Խայից — Դեյլին ծովից ձրկներ կորսան ազատ և կունենան գետնանշի և բրնձի սեփական արտեր: Դրա համար, սակայն, հարկավոր էր դեռ կռիւն, ուրի հանել քաղաքի ժողովրդին դժնդանական զորքերի դեմ: Չանը կաշիս պարկից հանեց մի կապոց թուղցիկներ և ավելի Յունին: Յուն պետք է այդ թուղցիկներն մի մասը ծովափին բաժաներ իր ընկերներին, իսկ մյուս մասը հասցներ Չի Չի-Լյային՝ իր հոր հին բարեկամին:

Մյուս օրը դեռ լույսը չէր բացվել, երբ Չանը և նրա ընկերները գնացին: Յուն այլևս չկարողացաւ քնել: Նա թուղցիկների մի մասը տեղափոխեց զամբյուղի մեջ, ծածկեց տերևներով և վրան դնելով մեղուկայի մի մեծ կոտոր՝ շարժվեց դեպի քաղաք: Չի Չի-Լյան շատ ուրախացաւ ստացած թուղցիկների համար և իր հերթին մի նամակ ավելի Յունին՝ Չանին հանձնելու համար:

Յուն հաջորդ գիշերը եղբոր սովորեցրած ճանապարհով հեշտությամբ անցավ ժողովրդական բանակի կողմը և Չի Չի-Լյայի նամակը հասցրեց Չանին:

Հիմա այն ծովափնյա քաղաքը, որտեղ սպրում է փոքրիկ Լի Վան-Յուն, չըջապատված է չինական ֆոյովորդական բանակի զորքերով, որոնց շարքերում կրոյում է նաև Յուի ավագ եղբայրը՝ Չանը: Իսկ Լի Վան-

Յուն շարունակում է տարել իր ծովափնյա խրճիթում
և գրեթե ամեն օր աննկատելի անցնում է եզրուր մոտ։
Նա քաղաքից անդեկտեթյուններ է տանում Չանին, խոկ
ափսեղից վերադառնում է թուռցիկներով և գրանք
տարածում քաղաքում։

Ժողովրդական բանակը չուտով կշախջախի Գո-
մինդանի գորգերը և ազատություն կբերի Չինաստա-
նին, որի համար իր նման հազարավոր երեխաների
հետ պայքարում է նաև փոքրիկ Լի Վան-Յուն։





ՉԺՈՒ ԴԵՒ ԼՐԱՄԱՆԸ

Տունդը դաշտում գետնանուշ էր հալաքում, երբ նրա մոտ եկավ մի գյուղացի և շտապ կանչեց Լյու Չժանի մոտ: Նա անմիջապես աշխատանքը թողեց և շտապեց գյուղ: Տունդը լավ գիտեր, որ եթե Լյու Չժանը կանչում է, ուրեմն կարևոր դարձի պետք է գնի: Ճանապարհին նա այնքան արագ էր դնում, որ չունչը կտրվում էր: «Տեսնես ո՞ւր պետք է ուղարկի», մտածում էր նա և քայլերն ավելի արագացնում:

Լյու Չժանը Տունդի հոր ամենամոտիկ ընկերն էր և նրա օգնականը: Երբ ճապոնացիների դեմ կռվելիս Տունդի հայրը սպանվեց՝ ժողովրդական միլիցիայի ջոկատի հրամանատար դարձավ Լյու Չժանը:

Տունդը չափ էր սիրում Լյու Չժանին և միշտ նրա ջոկատի հետ էր լինում: Լյու Չժանը Տունդին հաճախ

ուղարկում էր հետախուզութեան և նա միշտ ճշտութեամբ էր կատարում տրված հանձնարարութիւնները: Չժանը միշտ էլ նրանից գոհ էր մնում: Դժգոհում էր միայն Տունգը: Նա զգում էր, որ Չժանը նրան հեռու է պահում դժվարութիւններից և վտանգավոր տեղեր չի ուղարկում: «Երանի թե այս անգամ վտանգավոր տեղ ուղարկի», մտածում էր նա՝ մոտենալով Չժանի խրճիթին:

Երբ Տունգը խրճիթ մտավ, Լյու Չժանը ժողովրդական բանակի մի սպայի հետ նստած զրուցում էր:

— Ահա և մեր Տունգը, — նկատելով նրան, ասաց Լյու Չժանը:

Սպան մի հայացքով ոտից գլուխ չափեց Տունգին և հարցրեց:

— Քանի՞ տարեկան ես, Տո՛ւնգ:

— Ես՞... Ես տասնչորս տարեկան եմ:

Նրա տասներեք տարին նոր էր լրանում, բայց վախենալով, թե տարիքը կարող է նշանակութիւն ունենալ, մի տարի ավելացրեց:

— Փոքրիկ է, բայց խիղախն է, — ասաց Չժանը ձեռքը դնելով Տունգի ուսին, — նա արդեն մի քանի հանձնարարութիւն կատարել է: Ամբողջովին հորն է քաշել, — ավելացրեց նա:

— Լա՛վ, գնանք, — ասաց անծանոթ սպան և մտավ խորքի սենյակը: Չժանն ու Տունգը հետևեցին նրան:

Այնտեղ սպան ղինվորական պայուսակից հանեց մի խուռնացած, կարկատած շապիկ և տալով Տունգին ասաց.

— Շտապ հագիր այս շապիկը:

Տունգը հանեց իր շապիկը և հագաւ սպայի տվածը: Երբ նա հագնւում էր, հանկարծ նրա ձեռքը դիպաւ կողքի կարկատանին և մի պահ քարացած կանգ առաւ:

Անծանոթ սպան անհանգստացաւ.

— Մի՞թե այդքան նկատելի է, — ասաց նա և մտնողով շոշափեց կարկատանը:

— Ո՛չ, — միջամտեց Լյու Չժանը, — ուղղակի մեր Տունդը խելոք է և ամեն բան շուտ է հասկանում:

— Դեհ, այնպես արա, որ ուրիշներն էլ չհասկանան, — խտորեն ասաց անծանոթ սպան, — Չժու Դեի հրամանն է: Պետք է տանես քաղաք և հանձնես այս հասցեով:

Նա Տունդին պարզեց մի փաթեթիկ թղթի կտոր:

— Անդիր արա և պատուիր: Մենք շուտով կգանք քս ետեից: Այս ատելով նա Լյու Չժանի հետ դուրս եկավ:

«Ահա՛ թե ինչ... Ուրեմն ես պետք է քաղաք տանեմ Չժու Դեի հրամանը, — մտածեց Տունդը, — ինչպիսի՞ երջանկով յուռն»:

Ուրախությունից Տունդի աչքերը արցունքալիցան էին և նա հազիվ կարողացավ կարգալ թղթի վրա դրված հասցեն՝ «Բրուտների թաղ, երկրորդ փողոց, 17, Մա Էն-Պիին»:

Տունդն սկսեց անդիր տնել այդ հասցեն:

Երկու ամիս էր, ինչ Ժողովրդա-ազատագրական բանակը չրջապատել էր քաղաքը:

Գոմինդանական զորքերը ամլացել էին քաղաքում և սպասում էին դրսի օգնությանը, սակայն Չան Կայ-Շիի խոստացած օգնությունն ուղանում էր: Ամերիկացիները խոստացել էին չրջապատված զորքերին օգնություն տրամադրելով սննդամթերք հասցնել, բայց նրանք դրա փոխարեն օգնառությունով ավտոմատ հրացաններ և փամփուռա էին ուղարկում միայն:

Գոմինդանական զինվորները թալանում էին քաղաքի բնակչությանը, խլում էին նրանցից բրնձի վեր-

ջին հատիկը: Երանք բանտարկում էին զիմադրություն ցույց ավադներին և կոմունիստներից շատերին, որոնց կարողանում էին հայտնաբերել: Չնայած դրան, քաղաքի տանջված, վրդովված ժողովուրդը անհամբեր սպասում էր ժողովրդա-ազատագրական բանակին: Բանվորները և արհեստավորները, բրուտ Մա Էն-Պիի պլիսավորությամբ ղինված, սպասում էին ժողովրդա-ազատագրական բանակի հարձակմանը, որպեսզի թիկունքից խփեն գոմինդանական զորքերին: Արդեն ժողովրդա-ազատագրական բանակի հրամանատար Չժու Դեն հրաման էր տվել քաղաքի գրավման մասին: Հարկավոր էր այդ հրամանը հասցնել քաղաք, որպեսզի այնտեղ պատրաստ լինեն հարձակման և թիկունքից օգնելին: Բայց այդ այնքան էլ հեշտ գործ չէր: Քաղաքը չըջապատված էր գոմինդանական ամրություններով: Հարկավոր էր անցնել այդ ամրությունները: Գոմինդանականները ամեն միջոց գործ էին դնում հարձակման օրը և ժամը իմանալու համար: Այդ նպատակով նրանք քաղաքից դուրս բաղձաթիվ լրտեսներ էին ուղարկում:

Այդ օրերին հայտնի դարձավ, որ քաղաքի չըջապատված թափառող կույրը և իր ուղեկիցը գոմինդանական լրտեսներ են, որոնք անընդհատ տեղեկություններ են տանում գոմինդանական հրամանատարությանը:

Այն օրը, երբ Տունգին կանչեցին Լյու Չժանի մոտ, կույրը և իր ուղեկիցը անցնում էին նույն պուղի միջով:

— Օգնիր խեղճ կույրին, ո՛վ մարդ, եթե գուտեսնում ես արևի լույսը, օգնի՛ր, մի ավտոսա, — խըղճալի ձայնով բացազանչում էր կույրը և ձեռքի երկաթով երկու անգամ խփում ծնծղային, որը կախված էր նրա դաստակից: Մի քանի քայլ զնալուց հետո, նա նորից կրկնում էր նույնը: Չնայած նրա խղճալի տեսքին

և աղեկաբուր ձայնին, նա ձեռքի երկաթով ասյնքան վարժ ու աշխույժ էր խփում ծնծղային, որ ասես պատանի լիներ: Ձախ ձեռքով նա բռնել էր մոտ երկու մետր երկարություն ունեցող ձողի ծայրը, որի մյուս ծայրը դանդաղ էր մի կարճահասակ, ալյանդալված դեմքով և ցնցոտիներ հագած մարդու ձեռքին: Այսպես նրանք անցան գյուղի կենտրոնական փողոցով: Յնցոտիասլառ ուղեկիցը դիշատիչ հայացքով անընդհատ նայում էր շուրջը: Երբ նրանք գյուղից դուրս եկան և սկսեցին անցնել տղիանեփի արտերի միջով՝ կույրը կիսաձայն հարցրեց.

— Մարդ—մուրդ չի՞ երևում:

— Ո՛չ, —պատասխանեց ուղեկիցը խռպոտ ձայնով:

— Ի՞նչ տեսար:

— Միշտ նույն բանը: Այստեղ էլ մյուս գյուղերի նման իրարանցում է: Դաշտում աշխատող գյուղացիները աշխատում են զենքները մեջքներին. երևում է, որ նրանք ամեն բոլի հրամանի են սպասում:

— Դե՛, ուրեմն չտապենք: Եթե մենք այս երեկո չհասնենք միայնակ տնակին և չվերցնենք աղղանչանը, այլևս չենք կարող քաղաք մտնել. բայց այս ի՞նչ ձայներ են:

— Այդ քեզ է թվում, ոչ ոք չկա:

— Լա՛վ նայիր, ինչ որ ձայներ հասան ակտնջիս:

— Այդ քեզ է թվում, ոչ ոք չկա, —նորից կրկնեց ուղեկիցը:

Բայց նա դեռ չէր ավարտել իր խոսքը, երբ տղիանեփի արտից հանկարծակի նրանց դեմ դուրս եկան Լյու Չժանը և երկու զինվոր:

— Փաստաթղթե՛ր, —ասաց Լյու Չժանը ավտոմատն ուղղելով նրանց վրա:

Կույրը և իր ուղեկիցը մի պահ չփոթված կանգ առան:

— Փաստաթղթե՛ր, —կրկնեց Լյու Չժանը:

— Իմ փաստաթղթերը աստիճան է խլել, ես փաստաթուղթ չունեմ,—լացալուժած ձայնով ասաց կույրը,—և ո՞վ է ինձանից փաստաթուղթ պահանջել, որ դու պահանջում ես:

— Քեզ ասում եմ՝ փաստաթղթերդ ներկայացրո՛ւ, — այս անգամ ավելի խիստ տոնով հրամայեց Չժանը:

Կույրը ճարահատյալ սկսեց փնտրել ցնցոտիների մեջ: Վերջապես նա Չժանին պարզեց մի ծովափած թուղթ:

— Ամեն ինչ կարդին է, անցիր, — ասաց Չժանը կույրին և վերադարձրեց փաստաթղթերը: Ցնցոտիապատ ուղեկցի շունչը ետ եկավ և նա Չժանին մեկնեց ճիշտ նույնպիսի մի թուղթ: Չժանը մի քանի անգամ նայեց թղթին և հրամայեց զինվորներին՝ տանել նրան:

Չարմացած ուղեկցին զինվորները առաջ դրած տարան:

— Ես ինչպե՞ս սլիտի դնամ, բարի մարդիկ, բաց թողե՛ք իմ ուղեկցին, — ձայն տվեց կույրը:

— Հեռացի՛ր, քանի ուշ է, — սաստեց Չժանը, և ինքն էլ դնաց զինվորների ետևից: Երբ նրանք կույրից բավական հեռացել էին, Լյու Չժանը մտավ տղիանեփի արտը և այնտեղից հետևեց կույրին:

Կույրը երկար ձողը ետևից քարշ տալով մի քանի քայլ արեց և դեմ առնելով ճանասլարհի եղրի թմբին՝ վայր ընկավ: Նա մռթմռթալով ուղղվեց տեղում և այդպես էլ մնաց նստած թմբի վրա:

Քիչ հետո գյուղից դուրս եկավ Տունդը, անծանոթ սպայի տված շապիկը հագին, և երգելով սկսեց մոտենալ կույրին: Տղիանեփի արտից դուրս եկավ Լյու Չժանը և մոտենալով Տունդին՝ շնչաց նրա ականջին:

— Չգույշ եղիր, Տո՛ւնդ, այդ գիշատիչը փորձանք չբերի գլխիդ: Նա կարող է հասկանալ ամեն ինչ և քաղաքում քեզանից վրեժ լուծել:

— Շատ լա՛վ, ես զգուշ չեմ լինեմ, — ասաց Տունգը:

— Աշխատիր նրանից դուրս կորցել ազդանշանը և մենակ անցնել քաղաք:

— Շատ լա՛վ, ես կաշխատեմ այդպես անել:

— Դե՛հ, քե՛զ տեսնեմ. հիշի՛ր, որ ՉԺու Դեի հրամանն ես տանում: Այնպես արա, որ հորդ հիշատակը գետնովը չտաս:

— Երդվում եմ, որ հորս հիշատակը բարձր կպահեմ, — ասաց Տունգը և վերսկսելով երգը, մոտեցավ կույրին:

Կույրը զգալով, որ իրեն մոտենում են, սկսեց աղաղակել.

— Բարի անցորդ, օգնի՛ր խեղճ կույրին:

Տունգը կանգ առավ նրա մոտ:

— Ինչո՞ւ կարող եմ քեզ օգնել: Ես մի հատիկ բրինձ էլ չունեմ: Եթե դու ուզում ես այդ գյուղը գնալ՝ խորհուրդ չեմ տա: Քեզ այնտեղ ոչինչ չեն տա:

— Օ՛, դժբախտություն, ես ոչ մի տեղ գնալ չեմ կարող, — լացակումած տրտնջաց կույրը, — ես ոչինչ չեմ տեսնում:

— Բայց ինչպե՞ս ես դու այստեղ եկել, — հարցրեց Տունգը նստելով նրա դիմաց:

— Փախա՛վ, ուղեկիցս փախա՛վ: Գողացավ փողերս ու փախա՛վ... Օ՛յ, օ՛յ, օ՛յ...:

— Խե՛ղճ մարդ: Ի՞նչ պիտի անես հապա: Եթե ես քաղցած չլինեի՝ կուղեկցեի քեզ: Բայց ես քաղցած եմ և հոգնած:

— Ես բրինձ ունեմ, — վրա բերեց կույրը, — բլիթ էլ ունեմ, կտամ քեզ, միայն ինձ ուղեկցիր:

Այս ասելով նա բաց արեց իր տոպրակը և, այնտեղից հանելով մի գունդ խաչած բրինձ, տվեց Տունգին:

Ուրախությունից Տունգի աչքերը վառվեցին: Ահա թե ի՛նչ: Ուրեմն հաջողվե՛ց, ուրեմն կարելի՛ է կույր լրտեսի միջոցով քաղաք ընկնել:

— Շա'տ լաւ, ես քեզ կուղեկցեմ, — վերջապէս ասաց նա, — գնանք լեռները, ասում են այնտեղ ուտելիք շատ կա:

— Ո՛չ, ես լեռներից եմ գալիս, այնտեղ քաղցած են: Գնանք քաղաք, ես քաղաքում շատ ուտելիք ունեմ: Քեզ ինձ մօտ կսլահեմ և միշտ կկերակրեմ:

— Քաղա՛ք... Օ՛, ես քաղաք չեմ գնա, — խորամանկեց Տունգը, — այնտեղ սպանում են...

— Ինձ հետ կլինես, քեզ ձեռք չեն տա: Ես կույր եմ, ինձ բան չեն ասի: Կասեմ, որ դու իմ տղան ես:

— Իսկ դու չե՞ս խաբում, թե շատ ուտելիք ունես:

— Օ՛, ո՛չ, ո՛չ, հավատա՛ ինձ:

— Լաւ, կգա՛մ, — վերջապէս համաձայնվեց Տունգը: Քիչ հետո Տունգը բռնել էր կույրի ձողի ծայրը և առաջ ընկած գնում էր դեպի քաղաք: Նրա ետևից, բոբիկ ոտները փոշու մեջ թմփթմփացնելով, գնում էր կույրը:

— Օգնեցե՛ք խեղճ կույրին, եթե դուք տեսնում եք արևի լույսը, օգնեցե՛ք, միք ավստոսա, — ձայն էր տալիս կույրը և խփում իր ծնծղային: Այդպէս նրանք գնացին ամբողջ օրը առանց հանգստանալու:

Երեկոյան դեմ նրանք դռնվում էին քաղաքամերձ մի մեծ դյուղի մօտ: Գյուղ չհասած, կույրը կանգ առավ:

— Օ՛յ, օ՛յ, օ՛յ, — լսվեց կույրի ձայնը:

— Ի՞նչ պատահեց, — հարցրեց Տունգը զարմացած:

— Հողացավս բռնել է: Ես այլևս չեմ կարող գնալ: Արի մի փոքր հանգստանանք:

— Բայց այստեղ, ճանապարհի վրա անհարմար է:

— Մի՞թե այստեղ որևէ տուն չկա: Պետք է որ այստեղ տուն լինի:

— Ճանապարհից դուրս մենավոր մի խրճիթ կա, բայց ինչպէս երևում է, այնտեղ ոչ ո՛ք չի ապրում: Մեզ անգամ մի հատիկ բրինձ տվող չի լինի:

— Այդպէս ավելի լավ է, գնանք, ես էլի բրինձ
տւնեմ:

Տունդն այլևս չառարկեց: Առաջ ընկաւ, և նրանք
գնացին մենավոր խրճիթը: Խրճիթում իրեր չկային:
Միայն մի անկյունում հարդ կար թափած: Նրանք նըս-
տեցին հարդի վրա, կերան կույրի տոպրակում եղած
բրնձի մնացորդը և վերջին բլիթը, ապա պառկեցին
հանգստանալու: Կույրն անմիջապէս իրեն քնած ձեւաց-
րեց: Տունդը շատ էր հոգնել, բայց քունը չէր տանում:
Նա աչքերը փակ կրկնում էր հասցեն. «Բրուտների
թաղ, երկրորդ փողոց, 17, Մա Խն-Պիլին»:

Հանկարծ կույրը զգուշորեն բարձրացաւ: Տունդը
աչքերը բացեց և անշարժ սկսեց հետեւել նրան: Կույրը
ձեռքերն առաջ մեկնած մոտեցաւ պատին և սկսեց պա-
տի վրա ինչ որ բան փնտրել: Նա չոչափում էր պատի
բոլոր քարերը, ձեռքը մտցնում անցքերի մեջ: Այդպէս
նա չոչափեց բոլոր պատերը և մոլորված կանգ առաւ,
չիմանալով ինչ անի: Հետո նա ձայն տվեց Տունդին:

— Է՛յ, քնա՞ծ ես, ինչ է:

— Ի՞նչ կա, — հարցրեց Տունդը տեղից վեր կենալով:

— Մի նայիր պատերին, սպիտակ քար տես-
նում ես:

Տունդն անմիջապէս նկատեց կույրի փնտրած քարը,
որը պատի մյուս քարերից տարբերվում էր իր գույնով:

— Տեսնում եմ, իսկ ի՞նչ կա որ:

— Որտե՞ղ է այն, ցույց տուր:

«Այդանշանը», անցաւ Տունդի մտքով և նա սկսեց
քարը արագ տեղահան անել: Եւ իրոք, քարի տակ մի
թղթի կտոր կար՝ «Վիշապ» պատկերազրով:

— Հը, որտե՞ղ է քարը, — անհամբերությամբ
հարցրեց կույրը:

Տունդը չգիտեր ինչ պատասխանել: Նա լուռ էր:

կույրն անհանգստացած, խարխալելով մոտեցավ Տունդին:

— Ի՞նչ ես լուել, ո՞ւր է քարը:

Տունդը փորձեց փախչել, բայց կույրը մի ոստյուն կատարելով ամուր բռնեց նրա թևը:

— Տո՛ւր այդ թուղթը, տո՛ւր:

Տունդը հազիվ հասցրեց թուղթը բերանը դեցել և ծամել: Սոսկալի վայնասունով կույրը կառչեց նրանից: Տունդն աշխատում էր դուրս պրծնել նրա ճանկերից, բայց այդ այնքան էլ հեշտ չէր: Կույրն իր մատները խրել էր նրա շապկի մեջ: Նրանք թափալվեցին դետին: Սկսվեց մի անհավասար ձեռնամարտ: Հանկարծ կույրի ձեռքն ընկավ այն կարկատանին, որի մեջ կարված էր Չժու Դեի հրամանը:

— Ա՛—ա՛, օձի ճուտ,— ոռնաց նա և ավելի ամուր սեղմեց մատները: Այդ ժամանակ Տունդը վերցրեց սպիտակ քարը և նրանով հարվածեց կույրի գլխին:


Կույրը մռնչալով ձեռքերը թողեց և Տունդը դուրս թռավ խրճիթից:

Մյուս օրը Տունդն արդեն քաղաքում էր և թակում էր բրուտ Մա Էն—Պիի դուռը:

Նա տեղ հասցրեց Չժու Դեի հրամանը, իսկ երբ ժողովրդա—ազատագրական բանակի հարձակումն սկսվեց, բրուտ Մա Էն—Պին ընակչության գլուխն անցած թիկունքից հարվածեց թշնամուն: Վեց ժամում գոմին—դանական զորքերն անձնատուր եղան: Երեկոյան դեմ, միտինդի ժամանակ, երբ հրապարակում հավաքվել էր քաղաքի բնակչությունը և տոնում էր հաղթանակը, որիբունի վրա ազատագրական բանակի հրամանատար—

ների և Մա էն-Պիի կողքին կանգնած էր նաև փոքրիկ
Տունգը և ամբողջ ձայնով մեկ դռչում էր.
— Կեցցե՛ ազատ Չինաստանը...





ԴԵՊԻ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

1.

Պառաւ իւր Ֆին-ինը երկար սպասեց իր թոռ Պենին, քայց նա ուշանում էր: Պենը, ինչպես միշտ, վաղ առավոտյան դուրս էր եկել տանից և գնացել էր խոտենջներ հավաքելու: Բայց արդեն կեսօրն անց էր, իսկ նա չկար ու չկար: Իւր Ֆին-ինը ստիպւած ինքը դուրս եկավ Պենին որոնելու: Հենվելով իր կարճ ձեռնափայտին, բոլոր չին կանանց նման թեթեւ կաշաւով, նա չրջեց դուռի փողոցները, ապա դուրս եկավ դաշտ: Իւր Ֆին-ինը հազիվ էր ոտքերը շարժում: Նա երեւում իս անընդհատ հիվանդ էր և տանից դուրս չէր գալիս: Մի քանի քայլ անելով նա հեռաւոր կանգ էր առնում և նորից տնքալով շարունակում ճանապարհը:

— Անիծված լինի այսպիսի կյանքը, — փնթփնթում էր նա քթի տակ, — ի՞նչ պետք է լինի խոտենջի տված ուժը, որ կարողանամ քայլել: Օրական մի քանի խո-

խունջ ուտելով՝ չես ապրի: Հարկաւոր է բրինձ, հաց, իսկ ո՞վ է խեղճ աղքատին բրինձ տվողը:

Այսպես նա իր բռնցքաչափ ոտքերի վրա օրորվելով՝ առաջ էր դնում, երբ հանկարծ բամբակի արտի եղբին նկատեց Պենին:

Պենն ընկած էր մեջքի վրա, բոբիկ, մինչև ծնկները բաց ոտքերը խոտերի մեջ, իսկ դոււսը կոշտերին: Նրա քունքը և ճակատն արյունոտված էին, կիսաբաց աչքերը՝ խամրած:

— Պե՛ն, Պե՛ն, — ճչաց պառաւլը և, մոռանալով ոտքերի ցավը, մոտ վազեց նրան: — Ի՞նչ է պատահել քեզ Պե՛ն:

Պենը չէր շարժվում:

Պառաւլը մի քանի անգամ փորձեց Պենին բարձրացնել, բայց այդ նրան չհաջողվեց:

Խո Թին-Ինը մոտակա առվակից ջուր բերեց և ցանեց Պենի դեմքին: Նրա խամրած աչքերը կյանքի փայլ ստացան և սկսեցին շարժվել:

— Տատի՛, դու այստե՞ղ ես, — հազիւ լսելի շշնջաց նա և նրա աչքերը արցունքոտվեցին:

— Այո՛, Պե՛ն, ես այստեղ եմ, ի՞նչ է պատահել քեզ, ո՞վ խփեց... Օ՛յ, օ՛յ, օ՛յ, անիծյալ աշխարհ...:

Խո Թին-Ինը դժվարությամբ բարձրացրեց Պենին, և նրանք իրար հենվելով մի կերպ տուն հասան:

Նրանց տնակը գտնվում էր դյուղի ծայրին, մի քարքարոտ վայրում: Քարակույտների մեջ հազիւ էր նկատվում նրա բաց, առանց շրջանակի դուռը: Դա ավելի շուտ որջի էր նմանվում, քան տնակի: Լուսամուտներ չկային, և լույսը ներս էր թափանցում բաց դռնից:

Խո Թին-Ինը Պենին տեղավորեց հատակին, չորացած խոտերի վրա, և ինքն էլ նստեց նրա կողքին: Այլևս տնակում տեղ չմնաց: Թին-Ինի մեջքը կիսով չափ ծածկել էր դռնակը:

— Զուր տուր, տատի, ծարա՛վ եմ, — շնչաց
Պենը:

Ֆին-ինը դուրս եկավ և քիչ հետո վերադարձավ՝
ձեռքին ջրով լի խեցին: Պենն ագահությամբ խմեց ողջ
ջուրը:

— Էլի՛...

Ֆին-ինը նորից ջուր տվեց և սկսեց իր ոսկրոտ
ձեռքերով շոշափել Պենի վերքը, որի վրա չորացել էր
արյունը: Պատուվածքը շատ փոքր էր, բայց քունքը և
գլխի մի մասը ուռել էին: Երևում էր, որ խփել են
բուլթ բանով:

— Ինչո՞վ են խփել, Պեն, — հարցրեց պառավը
չոյելով նրա ուռուցքները:

— Ամեն ինչով... ոտքո՛վ, փայտո՛վ, ձեռքո՛վ...
Ո՛յ, — տնքաց նա, — ցավում է, շա՛տ է ցավում...

— Իսկ ո՞վ արեց, ո՞վ, ինչո՞ւ...

— Յզյա Ֆոյի տղան: Էլ ո՞վ կփորձեր խփել ինձ:

— Բոլոր աստվածների ցառումը նրա գլխին թող
թափվի և թող նա անիծյալ լինի, — ասաց Ֆին-ինը և,
ոնապից դուրս գալով, զնաց ողորմություն խնդրելու:

2.

«Գեղեցիկ Պեն» — գյուղում այսպես էին անվանում
նրան բոլորը: Եվ իրոք նա գեղեցիկ էր: Իր հասակա-
կիցներից նա տարբերվում էր բարձր հասակով և լայն
թիկունքով: Խիտ հոնքերի տակից միշտ կրակին էին
տալիս նրա սև աչքերը: Քիթը ուղիղ էր, բարձր, իսկ
թուխ չրթունքների արանքից փայլում էին նրա բրնձի
նման սպիտակ ատամները: Գյուղի երեխաների սիրելին
էր Պենը, նրանց առաջնորդը:

Զէր սիրում նրան միայն Նեն՝ Յզյա Ֆոյի տղան:

Պենը տասներեք տարեկան էր: Նրա հայրը և մայրը
մեռան ժանտախտից, երբ Պենն ընդամենը վեց տարե-

կան էր: Բարեբախտաբար կենդանի մնաց իմ Ֆին-ինը, որը պահեց, մեծացրեց նրան: Սկզբում իմ Ֆին-ինը աշխատում էր Ֆլյա Ֆոյի տանը, իսկ երբ ծերացավ՝ Ֆոն նրան դուրս արեց:

— Ուտող է, դործ անող չէ՛,—ասաց նա պառավի մասին, չնայած Ֆին-ինը աշխատում էր վաղ առավոտից մինչև ուշ երեկո և դրա համար մի քանի բուռ բերինձ էր ստանում միայն:

Ֆին-ինը և Պենը դրանից հետո սովի մատնվեցին: Դեռ ամառը մի կերպ քարշ էին գալիս, սնվելով խոխունջներով և վայրի բույսերի արմատներով, բայց ձմեռը մնում էին բոլորովին քաղցած:

Ծանր էր կյանքը, սարսափելի ծանր: Բերինձ չկար, պետնանուչ չկար, իսկ խոունջով ապրել չի լինի:

Պենը փորձեց աշխատանքի անցնել Ֆլյա Ֆոյի մոտ, բայց Ֆոն նրան թույլ չտվեց նույնիսկ տանը մոտենալու:

— Գնա՛, հեռացի՛ր,— ասաց Ֆոն,— դու ուտող ես միայն և ոչ թե դործ անող:

— Ես ամեն ինչ կանեմ, ես լավ կաշխատեմ,— փորձեց նրան համոզել Պենը,— բայց այդ ժամանակ Ֆոյի տղան՝ Նեն եգիպտացորենի ցողունով խփեց նրա գլխին, կրկնելով հոր խոսքերը:

— Գնա՛, ասում են, դու ուտող ես, աշխատող չես:

Պենը լաց լինելով տուն եկավ և ամեն ինչ պատմեց առտիկին:

— Ոչինչ,— հանգստացրեց նրան տատը,— ոչինչ, Պեն, մի կերպ կապրենք:

Եվ նրանք մի կերպ էլ ապրում էին:

3

Ֆլյա Ֆոն գյուղի ամենահարուստ մարդն էր, գյուղի տերը: Նա էր ճապոնացիների համար հարկ հաժաքում և նրանց սնունդի գյուղում ամեն ինչ անում:

Նա հազար մուրից* ավելի հող ունեւր: Ուզեր գյուղում հող չունեին, աշխատում էին նրա հողերի վրա: Աշխատում էին առավոտից մինչև կես գիշեր և դրա համար այնքան քիչ բրինձ կամ եգիպտացորեն էին ստանում, որ ամբողջ ձմեռը ոչինչ չէին ունենում ուտելու:

Իսկ այն գյուղացիները, որոնք մի քանի թղաչափ հող ունեին, պարտավոր էին համարյա ողջ բերքը ճապոնացիներին հանձնել: Փոխ հավաքում էր ճապոնացիների դրած ծանր հարկերը, իսկ ով հրաժարվում էր ամբողջ բերքը աալ, ծեծի էր ենթարկում ճապոնական գինավորների միջոցով: Նրանք հաճախ այրում էին ըմբոստների տները, իրենց գյուղից քշում—տանում, թե ո՞ւր՝ ոչ ոք չգիտեր:

Փոյի տղան՝ Նեն ամեն ինչով ուզում էր հորը նըմանվել: Նա կրկնում էր հոր խոսքերը, ճապոնացի սպայի մտրակը ձեռքին շրջում էր գյուղում և ամեն չնչին առիթով, հաճախ էլ առանց առիթի, ծեծում գյուղի երեխաներին:

Նեն հաճախ իր մտրակով հարվածում էր նաև հասակավորներին: Ո՛չ ոք չէր համարձակվում նրան րան ասել: Վայ այն գյուղացուն, որը կհամարձակվեր մատով անդամ գիպչել նրան: Փոխ գինավորների միջոցով այգավիսիներին անտանելի ծեծի էր ենթարկում:

Մի անգամ Պենը ճանապարհի վրա հողից տուն էր չինել և խաղում էր ընկերների հետ: Նեն իր դայակի հետ վերադառնում էր հարևան գյուղից: Այնտեղ ճապոնական դպրոց կար և նա սովորում էր այդ դպրոցում:

Պենին տեսնելով, Նեն մտրակով խփեց նրա գլխին: Մտրակի ծայրը դիպավ Պենի աչքին և պատուեց ունքը: Աչքերից կայծեր թռան:

* Մու — հողաչափ, 1 մուն՝ 0.6 հեկտար է:

— Ինչո՞ւ ես խփում:

— Դու գողացել ես մեր հողը: Գողին պետք է ծեծել, մեզ այդպես են սովորեցրել դպրոցում:

Նեն ամեն խոսքի մեջ աշխատում էր օգտագործել «դպրոց» բառը, որպեսզի ցույց տար թե ինքը դպրոց է դնում:

— Սա ձեր հողը չէ, — առարկեց Պենը, — սա ճանապարհի հողն է:

— Միևնույնն է: Բոլոր հողերը մերն են, — արհամարհանքով ասաց Նեն և ոտքերով քանդելով Պենի տնակը՝ ուղեց հեռանալ:

Պենն այլևս չհամբերեց: Նա վերցրեց ավերված տնակի ցեխը և նրանով խփեց Նենին:

Այդ ժամանակ վրա հասավ Նեի դայակը և սկսեց Պենին ծեծել: Մյուս կողմից էլ Նեն սկսեց մտրակով հարվածներ տեղալ Պենի գլխին:

Ծեծված ու արյունոտված՝ Պենը տուն եկավ:

Այդ օրվանից նրանք թշնամիներ էին:

Գյուղի երեխաներն այդ դեպքից հետո ավելի սիրեցին Պենին: Բայց Նեն միշտ առիթ էր փնտրում նրա հետ կռվելու:

Այս անգամ Պենը մենակ դաշտում խխունջներ էր հավաքում: Հանկարծ նրա վրա հարձակվեցին մի քանի հոգի և սկսեցին նրան ծեծել: Նեն իր դպրոցական ընկերներին բերել էր Պենին ծեծելու: Նրանց մեջ էր նաև ճապոնացի Միցուրիի տղան: Նեն երկար ձողով հարվածեց Պենի գլխին: Երբ Պենը գետին ընկավ՝ հինգ հոգով հարձակվեցին նրա վրա և կոշիկներով սկսեցին հարվածել, որտեղին որ պատահում էր:

Նրանք հեռացան այն ժամանակ, երբ Պենը ուշաթափված, արյունոտված ճակատով վայր ընկավ:

— Մեռա՛վ, — հանգիստ ասաց Նեն, — դե հիմա գնանք: Թող իմանա, թե ինչ է նշանակում ինձ ծեծելը:

Երեկոյան Խո Թին-Ինը տուն վերադարձաւ: Նրան այս անգամ էլ ոչինչ չէին տվել: Ծանր շնչելով նա մի կերպ տեղավորվեց Պենի կողքին և հազիվ լսելի ձայնով ասաց.

— Իմ բանը վերջացած է, Պե'ն, ես այլևս չեմ կարող տանից դուրս գալ, ես հիվանդ եմ:

— Պետք չէ, տատի, էլ մի գնա: Ես կաշխատեմ, կդնամ ուրիշ դժուղ փող կվաստակեմ:

— Անխճյալ աշխարհ, — շարունակեց պառաւը, — ես այդպես էլ չկարողացա իմ սեփական արտը ունենալ...

Տիրեց երկարատև, ծանր լռություն: Քար լռություն էր տիրում նաև դրսում:

— Տատի', — ասաց Պենը, — քունս չի տանում, պատմիր ինձ Ազատության հեքիաթը: Ես նորից եմ ուզում լսել Ազատության հեքիաթը:

— Ուժ չունեմ, Պե'ն, ես քեզ շատ եմ պատմել այդ հեքիաթը:

— Պատմիր Զինական պատի մասին, տատի, դու խոստացել ես:

Խո Թին-Ինը չպատասխանեց: Նորից լռություն տիրեց: Պենն անհամբերությամբ սպասում էր: Նա դիտեր, որ տատը այդքան շուտ չի կարող քնել և պետք է տնպայման պատմի:

Եվ իրոք՝ Թին-Ինը երկար սպասեցնել չտվեց:

— Պե'ն, սիրելիս, ես քեզ շատ հեքիաթներ եմ պատմել և էլի շատ ունեմ պատմելու, բայց ես չեմ կարող բոլորը պատմել: Լսիր, ես քեզ պատմեմ բարի տատածու և չար ոգու մասին:

— Նորի՞ց չար ոգի, տատի', դու չար ոգիների մասին շատ ես պատմել: Պատմիր մի ուրիշ բանի մասին:

— Չարերը շատ են, Պե՛ն, ամեն տեղ չարը կա, բայց վերջը հաղթելու է բարին:

— Ախր ե՞րբ, ե՞րբ պիտի բարին հաղթի, տատի՛, ես ուզում եմ տեսնել:

— Դու ուզում ես տեսնե՞լ... Կտեսնես. ես չեմ տեսնի, բայց դու կտեսնես:

— Իսկ ինչո՞ւ մինչև այժմ ոչ մի անգամ բարին չի հաղթել, տատի՛: Մինչև ե՞րբ պիտի մենք այսպես մնանք: Ես ուզում եմ բրինձ ուտել, հաց, միս... Մինչև ե՞րբ պիտի ամեն ինչ չարերինը լինի:

— Լսիր, Պե՛ն: Հեռու Հյուսիսում, Չինական պատերից էլ այն կողմ մի երկիր կա: Դո հորեղբայր էն-լայը, որ հիմա խարբինում է, այդ երկրի մասին շատ բան գիտե: Նա ասում էր, որ այնտեղ Չարի գլուխը կտրել են: Լսիր քեզ պատմեմ այդ երկրի մասին, Ստալինի մասին...:

Եվ ի՞նչ ֆին-ինը սկսեց պատմել: Պատմեց ինչ որ լսել էր էն-լայից Ռուսաստանի և Ստալինի մասին:

Պենը լարված լսում էր: Պառավի ամեն մի խոսքը դարձացնում էր նրան և հիացնում:

«Ամեն մարդ այնտեղ իր տունն ունի, իր հողը, բոլոր երեխաները դպրոց են գնում», — պատմում էր ի՞նչ ֆին-ինը:

Երկար չէր ի՞նչ ֆին-ինի պատմությունը Ռուսաստանի մասին: Նա շատ քիչ բան գիտեր և շուտով լռեց: Պենն ուշադրությոն չդարձրեց պառավի տնքոնքոցի վրա: Մտքերը նրան տարել էին հեռո՛ւ-հեռո՛ւ, Չինական պատերից այն կողմ... Կես գիշերն արդեն անցել էր, որ նա հոգնած գլխով քնեց: Երազում նա տեսավ մի բարի ծերունու՝ սպիտակ մազերով, սպիտակ մորուքով, նստած մի բլրի գագաթի: Երկար չարքով նրա մոտ էին գնում մարդիկ, անցնում նրա մոտով: Ծերունին ամեն մեկին մի բան տալիս էր: Մեկին մի ձի էր տալիս, մյուսին բրինձ կամ գետնանուշ: Բոլորը գնում

էին նրա մօտ: «Ստալինն է», — մտածեց Պենը և նա էլ բարձրացավ դեպի բլուրը: Ծերունին նայեց նրան, ժպտալով իր մօտ կանչեց և ասաց. «Դու կմնաս ինձ մօտ» և թեից բռնելով տարավ բլրի մյուս կողմը: Ինչէ՞ր ասես որ չկային այնտեղ: Գեղեցիկ տներ, այգիներ՝ լեփ լեցուն մրգերով, գետնանշով՝ ինչքան սիրտդ ուզի:

«Դու կմնաս ինձ մօտ, — ասաց ծերունին, — ահա քեզ տուն»:

Գեղեցիկ ծառերի ստվերում կանգնած էր մի փոքրիկ կանաչ կտուրով տնակ: Պենը թափով ներս մտավ: Այդ ժամանակ մեկը նրա թեից բռնեց ու սկսեց քաշել: Պենը վեր թռավ:

Արդեն լուսանում էր: Նրա թեը գտնվում էր տատի ձեռքին: Պենը նայեց նրա կողմը: Խո ֆին-ինը անշարժ էր:

— Տատի՛, — բացազանչեց Պենը, թեև աղատելով նրա ձեռքից: — Տատի՛... Տատի՛ աղեկտուր ճչաց Պենը և խրճիթից դուրս թռավ:

5

Գյուղացիների օգնությամբ Խո ֆին-ինն թաղելուց հետո Պենը երկու օր տանից դուրս չեկավ: Երբորդ օրը անտանելի սովը ստիպեց նրան դուրս գալ: Նա միայն մի քանի խխունջ կարողացավ հավաքել տան դիմացի արտից: «Խնջ անել, մտածում էր նա, — ո՞ւր գնալ»:

Նա գյուղից դուրս, բլրակի վրա պառկեց խոտերի մեջ և սկսեց մտածել: Շուրջը փռվում էին բամբակի և տղիանեփի արտերը, իսկ ավելի հեռու, գետի մօտ, հայելու նման արևի տակ փայլելում էին բրնձի ջրով լի արտերը: Ներքեում գյուղն էր՝ իրար նման, հավաքներ հիշեցնող տներով: Գյուղի մյուս ծայրին

երևում էր կանաչ կտուրով Յդյա Փոյի տունը: Պենը նայեց այդ տանը և հիշեց տատի ասածները՝ «Եթե այդ տան ամբարների բրինձն ու եգիպտացորենը բաժանեն գյուղացիներին, երկու տարի բոլորին կբավականացնի»: Իսկ ո՞վ է այդ բրինձի և եգիպտացորենի իսկական տերը. ահա այնտեղ՝ արտերում աշխատող գյուղացիները: Բայց նրանք էլ իր պես քաղցած են: Ինչո՞ւ...

«Իսկ ինչո՞ւ բոլորը չեն հարձակվում Փոյի տան վրա և ուժով խլում նրանից այդ բոլորը: Ի՞նչ կլինի»:

Նա հիշեց տատի պատմածը իր հորեղբայր Էն-Լայի մասին: Մի անգամ Էն-Լայը հինգ հոգու հետ հարձակվել էր Փոյի տան վրա, տարել մի քանի պարկ բրինձ և բաժանել գյուղացիներին, իսկ Փոյին կապել էր ծառից և ծեծել:

Գյուղացիների ուրախությունը երկար չէր տևել: Մյուս օրը եկել էին ճապոնացի զինվորները և բոլորին ծեծելով բանտ նստեցրել: Միայն Էն-Լային էր հաջողվել փախչել և աղատվել: Տատիկն ասում էր, թե նա թաքուն լուր է ուղարկել և հայտնել, որ ինքը Խարբինում է:

«Մենք չատ թույլ ենք, Դեղին դեղ ուժեղ է», ասել էր մի անգամ տատը: Նա հիշեց տատի վերջին պատմությունը:

«Ստալինը անսլալման կգա», ասաց նա:

Իսկ եթե...

Հանկարծ Պենը տեղից վեր թռավ, կարծես ինչ-որ բան հիշելով վաղ տվեց դեպի գյուղ:

— Յուա՛ն, Յուա՛ն, դուրս արի,— կանգնելով մի տնակի առաջ, ձայն տվեց նա:

Տնակից դուրս եկավ մի տաս-տասնմեկ սարեկան, խողանակի նման ցից մազերով տղա:

— Ի՞նչ կա, Պեն, ի՞նչ է պատահել:

— Եկ այստեղ, Յուան:

Յուանը մոտեցավ Պենին:

— Դու ուզո՞ւմ ես բրինձ ունենալ, չա՛տ, չա՛տ բրինձ...

Յուանը զարմացած նայում էր նրան և ոչինչ չէր հասկանում:

— Գնա՛նք,— ասաց Պենը և, բռնելով Յուանի թեւը, առաջ ընկավ:

6

Դեռ բոլորովին մութն էր: Թեթե քամի էր փչում: Բամբակի և կանեփի արտերը սվսվում էին համատարած լռության մեջ:

Դաշտի կողմից երկու հոգի ստվերի նման անշշուկ մոտենում էին Յզյա Ֆոյի տանը: Դրանք Պենն ու Յուանն էին:

Հասնելով Ֆոյի տանը, նրանք ոտների թաթերի վրա անցան մի ծայրից մյուսը: Մթության մեջ երկու անգամ առկայծեց լուցկին և նրանք անմիջապես իրենց գցիցին կանեփի արտը: Հազիվ էին հասել արտի մյուս ծայրը, երբ բոցը քամուց բորբոքված շրջապատեց ողջ տունը: Նրանք առանց ետ դառնալու էլ զգում էին, որ տունն այրվում է: Մի պահ կանգ առան բլրի դադաթին: Այգտեղից լավ երևում էր Յզյա Ֆոյի այրվող տունը: Տան շուրջը պտտվում էին տանեցիները, գոռում, ճչում, բայց ո՛չ ոք օգնության չէր հասնում: Գյուղը դեռ քնած էր:

— Գնա՛նք,— ասաց Պենը քաշելով Յուանի թեւից,— սպասելու կարիք չկա:

Եվ նրանք նորից սկսեցին վազել:

— Պե՛ն, իսկ դու լա՞վ դիտես ճանապարհը,— հարցրեց Յուանը շնչասպառ լինելով:

— Չենք կորչի,— գործնական ու կտրուկ պատասխանեց Պենը,— շտապենք, քանի դեռ գլխի չեն ընկել, թե ով է արել:

Նրանք արդեն բավական հեռացել էին դյուղից, բայց հեռվում դեռ երևում էր հրդեհից կարմրած երկինքը:

— Այրվո՛ւմ է, — առաջ Յուանը:

— Թող այրվի՛, այդպես է պետք այդ դեերին:

Արեն սկսեց բարձրանալ: Նրանք դուրս եկան ճանապարհից և քայլեցին արտերի միջով:

Պենն ուրախ էր, որ հաջողվեց իր մտադրությունն իրագործել: Ուրախ էր նաև Յուանը, բայց նա կասկածոտ էր. վախենում էր, թե չեն կարողանա տեղ հասնել: «Ինչքա՞ն պետք է դնանք, — մտածում էր նա, — իսկ եթե մեր ետևից հասնե՞ն...»:

Գուշակելով Յուանին տանջող մտքերը, Պենը սկսեց նրան հանգստացնել.

— Մի վախենա, Յուան, նրանք մեզ չեն գտնի: Ո՞վ ունես, որ մտածում ես: Երկուսով էլ որը ենք: Մեկ է, տանն էլ ուտելու բան չունենք: Իսկ խխունջ ու արմատներ ամեն տեղ էլ կան:

Եվ սկսեց երազել. այնտեղ մեզ տուն կտան, հող կունենանք, պետնախնձոր, բրինձ կցանենք և բերքը մեզ կլինի...

— Իսկ ճապոնացիները չե՞ն խլի:

— Ո՛չ, այնտեղ ճապոնացիներ չկան: Տատիկս ասում էր, որ այնտեղ ամեն մարդ իր ստացածի տերն է:

— Իսկ եթե մեզ հող չտան, — ինչպե՞ս պիտի ետ գանք:

— Կտա՞ն... Այնտեղ հող չատ կա: Մենք կդնանք Ստալինի մոտ: Նա բարի է, տո՛ւն, հո՛ղ, ամե՛ն ինչ կտա: Տատիկս ասում էր, որ Ստալինը բոլորից բարի է: Մենք ուղիղ կդնանք նրա մոտ:

Այսպես զրուցելով ու անընդհատ ետ նայելով նրանք պնում էին բաց դաշտով և չնկատեցին էլ, թե ինչպես արևը բարձրացավ:

Նրանց բոլորիկ ոտները այրվում էին արևից չիկացած հողի վրա և ծակծկվում տատասկներից, բայց նրանք ուշադրութուն չէին դարձնում դրան, գնում էին, գնում...

Երեկոյան դեմ նրանք կանգ առան մի փոքրիկ գետի մոտ: Գետի ճահճոտ ափերը լիքն էին գորտերով: Բարեբախտաբար լուցկի ունեին: Չորացած խոտերից խակույն խարույկ վառեցին և կերան գորտի խորոված ոտներ: Խմելով սառնորակ ջրից, նրանք նորից ճամբա ընկան: Ամբողջ օրը չհանդիպեցին ոչ մի բնակավայրի: Երբ մութը վրա տվեց՝ գիշերեցին բաց դաշտում, իրար գրկած:

Առավոտյան, դեռ արևը դուրս չեկած, առանց որևէ բան ուտելու, ճանապարհ ընկան: Սկսեց տանջել քաղցը: Իզուր էին ուտելու որևէ բան փնտրում: Ոչինչ չկարողացան ճարել: Նրանք անցնում էին քարքարոտ, անմշակ դաշտով: Հեռվում կապտին էին տալիս լեռները: Երեկոյան դեմ դուրս եկան ճանապարհի վրա: Արդեն քաղցից ու հոգնածությունից հազիվ էին ոտները շարժում: Հեռվում երևաց մի մեծ գյուղ:

— Ահա՛, այն գյուղն էլ անցնենք՝ կմոտենանք Մեծ ճանապարհին, իսկ գյուղում ուտելիք կճարենք, — ասաց Պենը Յուլանին խրախուսելու համար:

Արդեն մութն ընկել էր, երբ նրանք հասան գյուղի առաջին խրճիթին և թակեցին դուռը:

Ո՛չ ոք նրանց չպատասխանեց: Պենը դուռը հրեց և ներս մտավ մութ խրճիթը:

— Ոչ ոք չկա, — ասաց նա, — մենք այստեղ կգիշերենք:

Հոգնած ու ջարդված պառկեցին հենց դռան մոտ ու քնեցին:

Լուսադեմին նրանք արթնացան ինչ որ տնքտնքոցից:

Դռան ճեղքից թափանցող թույլ լույսի տակ տղա-

ները տեսան տան խորքի անկյունում խսիրի վրա պառկած մի պառավի, որը բաց աչքերով նայում էր նրանց։

Յուանը վախեցած անցավ Պենի ետևը։ Պենը նույնպես շփոթվել էր, բայց համարձակությունը հավաքեց և մի քանի քայլ արավ դեպի պառավը։

— Ուրե՞ր եք, — խռպոտ ձայնով հարցրեց պառավը։

— Մե՞նք... Անցորդ եմք... Գնում ենք...

— Անցորդ եք։ Մոտ եկեք, — ասաց պառավը և գլխով նշան արեց մոտենալու։

Առաջինը մոտեցավ Պենը։ Պառավն իր ոսկրոտ ձեռքով բռնեց Պենի թևից և նստեցրեց իր կողքին։

— Որտեղացի՞ եք։

Պենը տվեց իրենից գլուղի անունը։

— Իսկ ո՞ւր եք գնում։

— Մե՞նք... Գնում ենք հորեղբորս մոտ, Խարբին։

— Խարբի՞ն...։

Պառավն իր առանց այն էլ դուրս ընկած աչքերը չռեց։

— Այո, Խարբի՛ն, — զարմացած պառասխանեցին տղաները։

Երկարատև լռություն տիրեց։ Պառավը աչքերը հառած խրճիթի պատին՝ մտածում էր։ Այդ բոլորին նա շատ տարօրինակ էր։ Նրա գլուխն ու ձեռքերը դողում էին, իսկ շրթունքները շարժվում էին, ինչպես խոսելիս։

— Օօ՛, — վերջապես խոսեց նա, — հեռո՛ւ է Խարբինը... Բայց եթե ուղում եք՝ կհասնեք։ Եթե գնացե՞րի՛ք՝ չուտ կհասնեք։

— Գնացե՞րի՛ք, — զարմացած հարցրեցին երեխաները։

— Այո՛... Մեծ ճանապարհով եթե գնաք, շատ գնաք՝ կհասնեք Չան Չուն, իսկ այնտեղից կարելի է գնացե՞րի՛ք գնալ։

Յուանն ու Պենը իրար նայեցին: Տղաներն այդ մասին բոլորովին չէին մտածել: Նրանք իրենց կյանքում ոչ զնացք էին տեսել, ոչ էլ երկաթուղու մասին գաղափար ունեին:

— Իսկ մեզ կթողնե՞ն զնացք նստել,— հարցրեց Յուանը:

— Այդ մեկը դժվար է: Ճապոնացիները չեն թողնի, փող է պետք:

— Մենք փող չունենք:

Նորից լռություն տիրեց:

Պառափն իր խոշոր, դուրս ցցված աչքերը նորից հառեց մի կողմ:

— Քաղցած եք,— հարցրեց նա:

Տղաները լուռ էին:

Պառափը Պենի ձեռքը չթողնելով դիմեց Յուանին.

— Դուան ետևում, խոտերի տակ ուտելիք կա, բեր այստեղ:

Յուանը բարձրացրեց խոտերը և տեսավ փոսի մեջ դրված, բերանը հարդով ծածկված մի կալե փոքրիկ կճուճ: Նա փոսից դուրս քաշեց կճուճը և մոտեցրեց պառափին: Պառափը, հարդը մի կողմ թափեց: Կճուճը լիքն էր զեռնանշի միջուկով:

— Վերցրեք այս բոլորը, վերցրեք, թե չէ ձեզ ճանապարհին ոչինչ տվող չի լինի: Սո՛վ է:

Եվ առանց սպասելու, որ տղաները իրենք վերցրեն, նա մոտ քաշեց Պենի տոպրակը և ամբողջ զետնանուշը լցրեց այնտեղ, իրեն թողնելով միայն մի բուռ:

— Շատ է, տատի՛, այսքանը չա՛տ է, քեզ պահիր,— փորձեց առարկել Պենը, բայց պառափն այնպես աչքերը չռեց նրա վրա, որ նա ստիպված ճայնը կտրեց:

— Կզնաք ուղիղ այս ճանապարհով: Վաղը կհասնեք Մեծ ճանապարհին և կթեքվեք արևելք: Հինգ օրից հետո կհասնեք Չան Չուն: Այնտեղ փորձեք զնացք նստել և զնացքով զնալ: Խարբինում Սունգարիի ափին

հարցրեք ձկնորս խու Բեյին: Նրան այնտեղ բոլորը ճանաչում են: Գտեք խու Բեյին, նա ձեզ կօգնի: Ասեք, որ տեսել եք իր քրոջը: Խու Բեյը իմ եղբայրն է: Տասնհինգ տարի է չեմ տեսել նրան: Ասեք նրան, որ էլ ինձ չի տեսնի: Ես մինչև ձեր հասնելը այլևս չեմ լինի:

— Տատի՛ր, — բողոքեց Պենը:

— Լռի՛ր, ես գիտեմ ինչ եմ ասում: Դեհ դնացեք:

Տղաները շնորհակալություն հայտնեցին և խրճիթից դուրս եկան: Դռան մոտ Պենը ետ դարձավ և մի անդամ էլ նայեց պառավին: Պառավը հենված հողի պատին ձեռքով բարի ճանապարհ մաղթեց տղաներին:

Արևն արդեն դուրս էր եկել: Նրանք անցան դյուղի միջով և երբ դյուղից դուրս եկան, նստեցին ճանապարհի եզրին, սկսեցին ուտել պառավի տված դեղինանուշը:

7

Քամին քանի դնում ուժեղանում էր և ավելի բուրբոքում կրակը: Արդեն պարզ էր, որ հրդեհը հանդընեն շնանար է, մնում էր իրերը փրկել: Բայց մենակ ոչինչ չէր կարելի անել: Նեն վախեցած հեռու էր փախել: Փոյի կինը ուշաթափվել էր: Նեի դայակը նրանով էր զբաղված: Փոն երկու ծառաների հետ հազիվ կարողացավ դուրս բերել տան մի քանի թանկարժեք իրերը: Մինչև տաղնապից արթնացած դյուղացիները օգնության կհասնեին, տան առաստաղը փուլ եկավ: Փոն գլխին տալով երեխայի նման լաց էր լինում:

— Ավերվե՛ց, տունս ավերվե՛ց, տմե՛ն ինչ կորավ:

Փոյի հարստության հետ այրվեց նաև նկուղում գտնված ճապոնացիների համար հավաքած բրինձն ու եգիպտացորենը:

— Տե՛ղն է, դավաճանին այդպես էլ պետք է, —
ասում էին հավաքված գյուղացիները:

Երեկոյան դեմ եկան ճապոնական զինվորները:
Բոլոր գյուղացիներին դաշտ քչեցին և հերթով սկսեցին
հարցաքննել: Նրանք գյուղացիներին մտրակներով ծե-
ծում էին և պահանջում ասել հրդեհողների անունը:

Նեն, որ ճապոնացիների հետ անցնում էր շարքով
կանգնած գյուղացիների առջևից, նկատեց որ Պենը
չկա: Այդ մասին նա հայտնեց հորը:

Զինվորները ողջ գյուղը տալին ու վրա արին, բայց
Պենին չգտան: Շուտով հայտնի դարձավ, որ անհայ-
տացել է նաև Յուանը:

Գյուղից դուրս մարդիկ ուղարկեցին: Նրանք գնա-
ցին բոլոր ուղղություններով: Ճապոնացի մի զինվոր
Փոյի ծառաներից մեկի հետ դնաց այն ուղղությամբ,
ուր գնացել էին Պենն ու Յուանը:

Հետապնդողները պառավի խրճիթին հասան տղա-
ների դուրս դալուց մի ժամ հետո:

— Այստեղով երկու երեխա չե՞ն անցել, — հարց-
րեց պառավին Փոյի ծառան:

— Երկու երեխա՞, — հարցրեց պառավը նայելով
նրանց զայրացիտ դեմքին:

— Այո՛, երկու տղա, ա՛յ, այսպիսի տղաներ, —
ձեռքով օդի մեջ ցույց տվեց Փոյի ծառան:

— Նրանք այստեղ էին, ի՞նչ կա որ:

— Այդ քո գործը չէ՛, ասա՛, ո՞ւր գնացին:

— Երեկ երեկոյան նրանք այստեղից գնացին Արե-
վելք, ասացին, որ գնում են Մուկդեն: Ի՞նչ կա որ, —
հարցրեց պառավը: «Ճապոնացին որ հետն է, բարի
բանի համար չի հարցնում», մտածեց նա:

— Ասում ես՝ Մուկդեն:

— Այո՛, գնացին Մուկդեն, ես տեսա, նրանք
ծովեցին Մուկդեն տանող ճանապարհով: Ի՞նչ է պա-
տահել:

Ճապոնացիին և Ֆոյի ծառան առանց բաղադրություն տալու դուրս եկան և մի քանի հարյուր մետր չհասած այն տեղին, որտեղ նստած էին Պենն ու Յուանը, թեք-վեցին աջ, դեպի Մուկդեն տանող ճանապարհը:

8

— Շտապե՛նք Յուան, մեզ կարող են հետեւել,—
ասաց Պենը տեղից վեր կենալով,— զնանք, քանի ուշ
է:

Ամբողջ օրը մինչև ուշ երեկո քայլեցին առանց
հանգստանալու: Գիշերեցին բաց դաշտում:

Մյուս օրը կեսօրին հասան Մեծ ճանապարհին:
Խճուղին ձգվում էր դեպի հյուսիս—արեւելք: Նրանք,
ինչպես ասել էր պառավը, թեքվեցին աջ:

Խճուղին դյուղամիջյան ճանապարհի նման հան-
դիստ էր: Անընդհատ սլանում էին ավտոմեքենաները:

Նրանք քայլում էին ճանապարհի եզրով: Շատ
չէին զնացել դեռ, երբ ետեւից հասավ մի րեռնափոխ
ավտոմեքենա և կանգ առավ ուղիղ նրանց կողքին:

Շոֆերը, որ մի հասակավոր չինացի էր, գլմելով
տղաներին հարցրեց.

— Հեռո՞ւ եք գնում:

— Մենք գնում ենք Չան Չուն,— պատասխանեց
Պենը:

— Ուզո՞ւմ եք մեքենայով գնալ:

Պենն ու Յուանը զարմացած նայեցին իրար: Նրանք
այդպիսի առաջարկության չէին սպասում:

— Մենք փող չունենք,— ասաց Յուանը:

— Փող պետք է: Նստեցեք, ես ձեզ կտանեմ,
միայն հոցում կրակը միշտ վառ պահեք:

Չինաստանում բենզինը քիչ է: Այնտեղ ավտոմեքե-
նաները աշխատում են փայտով կամ ածուխով: Մեքե-

նայի թափքում երկաթե հնոց է դրված, որի մեջ բեն-
զլինի փոխարեն փայտ կամ ածուխ են վառում:

Պենն ու Յուանը ուրախացած անմիջապես բարձ-
րացան մեքենայի վրա: Շոֆերը ցույց տվեց, թե ինչ-
պես պետք է հնոցը վառեն և, նստելով իր տեղում,
սկսեց վարել մեքենան:

Տղաների ուրախությանը չափ չկար:

Ավտոմեքենան սլանում էր հարթ խճուղով: Աջ ու
ձախ փովել էին բամբակի անծայրածիր դաշտերը:
Իրար ետևից արագ անցնում էին մեծ ու փոքր գյուղեր:
Հանդիպում էին սայլակներին լծված գյուղացիներ,
որոնք տեղափոխում էին դանազան իրեր: Օրը անտա-
նելի շոգ էր: Տաք քամին ուժեղ խփում էր տղաների
դեմքին: Անընդհատ փայտի կտորներ դնելով հնոցի
մեջ, նրանք երգում էին հեքիաթից սովորած երգը.

«Մենք սև արծվի թևին նստած

Կանցնենք սարեր ու ծովեր...»

Ճամփեղրի մի գյուղում մեքենան կանգ առավ ջուր
վերցնելու: Պենը շոֆերի հետ կտավե դուլները վերց-
րած գնաց առուն ջրի, իսկ Յուանը մնաց մեքենայի
վրա: Հենված թափքի եզրին, նա անհոգ դիտում էր
տաճարի մոտ հավաքված մարդկանց: Հանկարծ սար-
սափից քարացավ: Նրա շունչն սկսեց կտրվել, սիրտը
թռչնակի նման ուժեղ թփրտաց: Նա թափով փովեց
թափքի հատակին: Այս ի՞նչ է. չար ոգի՞ն երևաց
աչքին, թե՞ իրականություն է:

Տաճարի մոտ հավաքված մարդկանց մեջ կանգնած
էին Ֆոյա Ծոյի ծառան և մի ճապոնացի զինվոր: Որ-
տեղի՞ց, ինչպե՞ս հայտնվեցին նրանք այստեղ: Յուանը
ավելի ամուր կպավ հատակին:

Ծոյի ծառան և ճապոնացի զինվորը գնացին պա-
ռավի ցույց տված ճանապարհով՝ դեպի Մուկդեն,
բայց շուտով գլխի ընկան, որ պառավն իրենց խաբել
է: Մուկդենի խճուղու վրա կանգնած էր ճապոնական

մի զորամաս: Նրանց հայտնեցին, որ ճանապարհը փակ է և մի շաբաթ է՝ այդտեղով թռչուն անգամ չի անցել: Այդ ժամանակ զորամասից մի սովորմեքենա էր գնում դեպի Չան Չունի ճանապարհը: Նրանք որոշեցին փախչողներին սպասել Չան Չունի ճանապարհի վրա և բռնել: Եվ ահա, Յոյա Ֆոյի ծառան, ճապոնացի զինվորի հետ այստեղ էր: «Խնչ անել», մտածում էր Յունանը: Եթե իրեն չնկատեցին, ապա հիմա Պենին անսպասան կնկատեն:

Բայց բախտը ժպտում էր տղաներին: Պենը ջրով լի դուլը ձեռքին վերադառնալիս նկատեց Ֆոյի ծառային և շոֆերի ետևում թաքնվելով հասավ մեքենային: Նա մի վայրկյանում թռավ թափքի մեջ և սլառկեց Յունանի կողքին:

Ամեն ինչ կարծես թե հաջող էր անցնում, բայց հանկարծ նրանք մոտիկից, չատ մոտիկից լսեցին Ֆոյի ծառայի ձայնը.

— Մեքենան ո՞ւր է գնում:

— Ուր որ անիվները տանեն, — կատակեց շոֆերը:

— Դեղ հարցնում են՝ ո՞ւր է գնում, — ջղայնացավ Ֆոյի ծառան:

— Չե՞ս տեսնում, որ չի գնում:

Պենն ու Յունանը քրտնքի մեջ կորան: Իսկ եթե նրանք ուղենան դնալ այս մեքենայով...

— Դո՛ւ մայրը սատանաների հետ պար է եկել երեւի, — լսվեց ծառայի դժգոհ փնթփնթոցը, և ամեն ինչ լռեց:

— Է՛յ, ո՞ւր եք, տղերք, — ձայն տվեց շոֆերը:

— Այստեղ ենք, քչի՛ր, — ասաց Պենը ցածր ձայնով:

Ամպի նման փոշի բարձրացնելով, մեքենան սլացավ խճուղով: Երբ գյուղն արդեն մնացել էր հեռվում, տեղաները գլուխները զգուշությամբ բարձրացրին: Վախից երկուսն էլ գունատվել էին:

— Ուրեմն մեզ հետևում են,—ասաց Պենը, և
հրկուսն էլ լռեցին:

9

Մյուս օրը վաղ առաւոտոյան մեքենան կանգ առավ
Զան Զունի փողոցներէյ մեկում:

Բարի շոֆերը արթնացրեց թափքում քնած երեխա-
ներին և ասաց.

— Արդեն տեղ հասանք, իջե՛ք:

Պենը և Յուանը անմիջապէս վեր թռան: Մեքենա-
ւից իջնելով, նրանք շնորհակալություն հայտնեցին
շոֆերին և, մի քանի քայլ հեռանալով, մոլորված
կանգնեցին:

— Ինչո՞ւ եք կանգնել,— հարցրեց շոֆերը:

— Մե՞նք... Մենք չգիտենք, թե ուր գնանք,—
պատասխանեց Պենը ամաչելով:

— Ինչպե՞ս,— զարմացավ շոֆերը,— դուք Զան Զուն
չէ՞ի՞ք ուղում:

— Այո՛... Բայց... Մենք այստեղից պիտի գնանք
Խարրին:

— Աա՛... Այդ դեպքում այս փողոցով ուղիղ գը-
նացեք մինչև հրապարակ, այնտեղ բոլորը ձեզ ցույց
կտան կայարանը: Կայարանից գնացքներ են գնում
Խարրին:

Պենն ու Յուանը նորից շնորհակալություն հայտ-
նեցին և գնացին շոֆերի ցույց տված կողմը:

Բաղաքը նոր էր արթնանում: Փողոցը կամաց-
կամաց լցվում էր անցորդներով: Բոբիկ ոտներով,
անշշուկ անցնում էին մրուտած, պատռտված շորերով
մարդիկ: Բոլորն էլ գունատ էին, կռացած, նիհար ու
գուրս ցցված այտոսկրներով: Դրանք չինացի բանվոր-
ներ էին, որոնք շտապում էին ճապոնացիների գործա-
րաններում աշխատելու:

Առանց նկատելու, որ բոլորը գնում են մայթերով՝ Պենն ու Յուանը անցնում էին սալահատակով։ Ձնայած փողոցն ավելի ու ավելի էր լցվում մարդկանցով, բայց տիրում էր մեռելային լռություն։ Խումբ-խումբ անցնող բանվորները իրար հետ ոչ մի խոսք չէին փոխանակում։ Գլուխները կախ, օրորվելով գնում էին, և միայն նրանց բոբիկ ոտների թփթփոցն էր լսվում սալահատակի վրա։

Հանկարծ տղաները նեղ փողոցից դուրս եկան լայն, մարդաշատ հրապարակը։ Այստեղ կյանքը բոլորովին ուրիշ էր։ Մեծ-մեծ շենքերի պատերի տակ դարսված էին զանազան ապրանքներ՝ հագուստեղեն, կոշիկներ, կաթսաներ, մանրուք և զանազան այլ իրեր։

Լսվում էին վաճառողների ուրախ բացազանչությունները։ Նալիկները տկտկացնելով վաճառողներին էին մոտենում ճապոնացի կանայք, տղամարդիկ։ Ամբոխը ճեղքելով այս ու այն կողմ էին վազում ութ-տաս տարեկան տղաներ, փոքրիկ արկղերը վզերից կախած ու բարակ, զնդուն ձայնով ճչում։

— Սիգարե՛թ, սիգարե՛թ, սիգարե՛թ...

— Ո՞ւմ կոշիկները մաքրե՛լ, ո՞ւմ կոշիկները մաքրե՛լ...

Փողոցի անկյունում մի ճապոնացի ճչում էր.

— Մո՛ւճի, մո՛ւճի, մո՛ւճի (բրնձի ալյուրից պատրաստված թխվածք)։

Պենն ու Յուանը կանգ առան նրա մոտ։

— Մո՛ւճի, մո՛ւճի, — կրկնում էր ճապոնացին։

Նրանք սաստիկ սոված էին։ Պառավի տված գետնանուշը վերջացել էր դեռ երեկ և արդեն մի լրիվ օր էր՝ ոչինչ չէին կերել։

Պենը քաշեց Յուանի թևից։

— Այստեղ մեզ ոչինչ չեն տա, գնա՛նք։

Հետզհետե հրապարակն ավելի էր լցվում։ Անսովոր մարդու համար անց ու դարձը դժվար էր դառնում։

Պենն ու Յուանը, որ իրենց կյանքում դեռ այսքան չատ-
բաղմուլթյուն չէին տեսել, հազիվ էին անցնում ամ-
բոխի միջով: Նրանք անընդհատ դիպչում էին սրան-
նրան: Մի ճապոնացի ուժեղ հրեց Յուանին:

— Ի՞նչ ես ոտքերի տակ ընկնում, դեռ ճուտ:

Նրանք իրար թե բռնած հազիվ դուրս եկան այդ
աղմկոտ հրապարակից: Պենը սիգարեթ վաճառողներից
մեկին հարցրեց կայարանի տեղը: Տղան ցույց տվեց, և
նրանք մոտեցան կայարանի հսկայական շենքին:

Կայարանի դեմի փողբրիկ հրապարակը լեւի-լեցուն
էր մարդկանցով: Բոլորն էլ չինացիներ էին՝ կանայք,
երեխաներ, ծերեր: Նրանք նստել էին պատերի տակ,
պառկել կեղտոտ սալահատակին:

Մի անկյունում նրանք տեսան իրար վրա ընկած,
սեւացած դեմքերով մարդկանց, որոնց վրա հաղարավոր
ճանճեր էին իջել: Տղաները կարկամած կանգ էին
առել այդ սարսափելի տեսարանի առաջ և չգիտեին ինչ
անել: Նրանց մոտեցավ մի հասակավոր, դժգոխած մա-
ղերով կին:

— Հեռացե՛ք, հեռացե՛ք, լավ չէ նայել մեռածնե-
րին: Երեկվանից ընկած են, բայց ոչ ոք չի մտածում
նրանց թաղել, անիծյալ լինի այսպիսի աշխարհը:

— Իսկ ինչո՞ւ են այսպես եղել, — հարցրեց Պենը
զարմացած: Մի՞թե նրանք տուն չունեն: Պառավը ոտից
դուրի չափեց տղաներին: Նրանց հարցը պառավին
չատ էր զարմացրել:

— Սովի՛ց, սովի՛ց մեռան: Մենք բոլորս էլ այս-
պես ենք լինելու, — ասաց պառավը և ձեռքով ցույց
տվեց հրապարակում եղած բազմությանը:

— Դեղին դեղ* տարավ... Ի՞նչ ունեինք՝ տա-
րա՛վ, տարա՛վ անկուշտը:

* Զինացիներն այդպես անվանում են ճապոնացիներին:

Տղաները հեռացան պառավից: Շուտ, որքան հնա-
րավոր է շուտ փախչել այստեղից: Նրանք մոտեցան
կայարանի մուտքին, բայց ճապոնացի դռնապանը ներս
չթողեց:

— Զինացիները պետք է դրսում սպասեն:

— Ինչո՞ւ, առարկեց Պենը, — ինչո՞ւ դրսում:

— Հեռացի՛ր, — դևի ճուտ, այդ քո գործը չէ, —
և նա երեխաներին հրեց մի կողմ:

Այդ ժամանակ մի չին ծերունի մոտեցավ նրանց:

— Ո՞ւր եք ուղում դնալ, երեխաներ, — հարցրեց
նա:

— Մենք Խարբին ենք գնում, բայց փող չունենք, —
պատասխանեց Յուանը:

— Գնացե՛ով չեք կարող դնալ, թեկուզ փող էլ
ունենաք. գնացքները հիմա գորքեր են տեղափոխում:

— Զորքե՞ր... Հապա ի՞նչ անենք:

— Ոտքով պետք է դնալ:

— Մենք ճանապարհը չգիտենք, — ասացին տղա-
ները:

— Գնանք, ես ցույց կտամ:

10

Երկու շաբաթ էր, ինչ նրանք գնում էին Չան
Չունից դեպի հյուսիս ձգվող ճանապարհով: Եթե մինչև
Չան Չուն հասնելը տղաների բախտը բանում էր, ապա
այս երկու շաբաթվա ճանապարհորդությունը նրանց
վրա չեկավ: Ամեն քայլափոխում նրանց սպառնում էր
վտանգը: Ծանապարհով անընդհատ անցնում էին զին-
վորական ավտոմեքենաներ, տանիկեր, ինքնազնաց հրա-
նոթներ: Երկար շաբաթերով հաճախ անցնում էր ճապո-
նական հետևակը: Տղաները մեծ մասամբ գնում էին
ճանապարհի եզրի արտերի միջով: Անտանելի քաղցը և

Հոգնածությունը նրանց հյուծել էին, անճանաչելի դարձրել:

Դաշտերում ուտելու ոչինչ չկար: Գյուղերը դատարկ էին: Երբ նրանք որևէ բան ճարելու հույսով գյուղ էին մտնում, անմիջապես սափալած էին լինում հեռանալ: Ամեն տեղ նրանց հանդիպում էին սովահար, ուռած դեմքերով մարդիկ, երեխաներ, անթաղ մնացած գիսակներ:

Յուանը սկսել էր դողացնել: Նրա աչքերը փոս էին քնկել, ալյուսկրները ցցվել: Շատ էր հյուծվել ու հոգնել նաև Պենը, բայց նա աշխատում էր այդ բանը թաքցրնել Յուանից:

— Շուտով կհասնենք, ամեն ինչ լավ կլինի, — հորդորում էր նա Յուանին, — Խարբինում հորեղբայրս մեզ ուտելիք կտա, իսկ այնտեղից մենք կգնանք Ստալինի երկիրը: Այնտեղ մեզ հող կտան, ամեն ինչ կունենանք: Մենք Ստալինին կսպասենք մեր տեսածներին մասին, նա ճապոնացիներին կսլուտի: Ստալինը բոլոր բարիներից բարի է, բոլոր ուժեղներից՝ ուժեղ, — կրկնում էր նա տատի խոսքերը:

Երեկոյան դեմ նրանք նկատեցին մի մեծ քաղաք, բարձր շենքերով, բազմաթիվ ծխնելույզներով:

Արդեն մութն էր: Տղաները մոտենում էին քաղաքին: Դեռ հեռվից նրանք քաղաքում սլտավող բազմաթիվ լույսեր տեսան և լսեցին ուրախ բացազանչություններ:

— Այս ի՞նչ բան է, Պե՛ն, կարծես թե տոն լինի:

— Ի՞նչ տոն, այս ամսին տոն չկա: Երևի ճապոնացի է պսակլում:

Նրանք քաղաք մտան: Ծայրամասի փողոցները դատարկ էին, քաղաքի կենտրոնից ավելի ուժեղ էին լավում ուրախ բացազանչություններն ու երկարատև «չանգոները»:

— Ետապի՛ր, Յուան, սա բոլորովին էլ հարսանիքի նման չի,—ասաց Պենը և արագացրեց քայլերը։

Հրապարակի մոտ նրանք կանդ առան անսովոր տեսարանի տուաջ։ Հրապարակը լեւի-լեցուն էր մարդկանցով։ Հաղարավոր մարդիկ դուրս էին եկել փողոց՝ երկար ձողերի ծայրին ամրացված թղթե լապտերները և ջահերը ձեռքներին։ Նրանք շարքերով պատվում էին հրապարակում և բացադանչում։

— Եանդո՛, շանդո՛...

Պենն ու Յուանը դարմացած կանգնել էին հրապարակի ծայրում։

— Այս ի՞նչ բան է, ի՞նչ է պատահել,— հարցնում էին նրանք իրենց մոտով անցնողներին։ Բայց նրանց ոչ ոք չէր պատասխանում, բոլորն էլ զբաղված էին։

«Ի՞նչ պետք է պատահած լինի» մտածում էին տղաները, երբ նրանց մոտեցավ մի հասակավոր մարդ՝ կարմիր շորը թևին կապած։

— Դուք ի՞նչ է, լապտերներ չունե՞ք։

— Ո՛չ, չունենք,— պատասխանեցին տղաները,— մե՛նք...

— Գնա՛նք,— ասաց անծանոթը և սուաջ ընկավ։

Հրապարակի մյուս ծայրում երկու երիտասարդ տղա ջահեր էին բաժանում։

— Երկու ջահ տվեք,— ասաց անծանոթը դիմելով երիտասարդներին։

— Իսկ ինչո՞ւ համար,— հարցրեց Պենը, բայց նրա ձայնը խլացավ հրապարակում թնդացող ուրախ բացուցանչությունների նոր ալիքից։

— Դեհ, միացե՛ք շարքերին և ուրախացե՛ք, այսօր տխրելու օր չէ,— ասաց անծանոթը, ջահերը տղաներին հանձնելով։

Պենը քաջեց նրա թևից՝ հասկացնել ուղեւով, թե բան ունի ասելու։ Անծանոթն ահանջը նրան մոտեցրեց։

— Ի՞նչ կա։

— Մենք չգիտենք, թե ի՞նչ տոն է այս, ինչո՞ւ են ուրախանում:

— Չգիտե՞ք, — դարձացավ անծանոթը, — ինչպե՞ս թե չգիտեք:

— Մենք նոր եկանք այստեղ, — արդարացավ Պենը, — մենք ճամփորդ ենք, հեռվից ենք գալիս:

— Չգիտե՞ք, — ուրախ լուր հաղորդելու հաճույքից պայծառացած դեմքով հարցրեց անծանոթը: — Ստալինին ճանաչո՞ւմ եք, գիտե՞ք...

— Այո՛, ի՞նչ կա որ, — հետաքրքրությամբ վրա տվեց Պենը:

— Ստալինը գալիս է, Ստալինը գալիս է, — ասաց անծանոթը և երեսայի նման պարելով հեռացավ:

— Ստալինը գալի՛ս է, — շնչաց Պենը, կարծես լավ չհասկանալով լսածը:

— Ստալինը գալի՛ս է, — հանկարծ ամբողջ ձայնով ճչաց նա և քաշելով Յուանի թևից, թափահարելով իր լսարանները՝ միացավ ցուցարարների հոծ բազմությանը:

Կես գիշերն արդեն անցել էր:

Պենն ու Յուանը չէին նկատում, որ ցույցն արդեն ավարտվել է և բոլորը հեռանում են հրապարակից: Նրանք մոռացած քաղց, հոգնածություն, վազում էին հրապարակի մի ծայրից մյուսը և բացազանչում:

— Ստալինը գալիս է... Շանգո՛, Ստալին, շանգո՛, շանգո՛...

Հրապարակը բոլորովին դատարկվել էր: Տղաները ուշքի եկած կանգ առան:

Նրանց մոտեցավ լապտերներ տվող անծանոթը:

— Ժամանակն է տուն գնալու, — ասաց նա:

— Մենք այստեղ տուն չունենք, մենք հեռու ենք գնում, — պատասխանեցին տղաները:

— Ո՞ւր եք գնում.

— Խարբի'ն:

— Հիմա Խարբին գնացող գնացք չկա:

— Մենք փող չունենք, ոտքով պետք է գնանք,—
ասաց Յուանը:

— Ոտքով,— անծանոթը ծիծաղեց,— ինչո՞ւ ոտ-
քով: Վաղը ես եմ գնացքը տանում: Հիմա գնանք մեր
տուն, իսկ վաղը միասին գնացքով կգնանք Խարբին:

*

Գիշերը տղաները մնացին մեքենավար Ու Դեյ-ինի
տանը: Այդ օրը նրանք չատ բան իմացան: Դեյ-ինը
նրանց պատմեց պատերազմի մասին: Ասաց, որ սովե-
տական զորքերը պատերազմ են սկսել, որպեսզի ճապո-
նացիներին դուրս քշեն Մանջուրիայից:

11

Ճապոնացիները չգիմացան Սովետական հզոր բա-
նակի ճնշմանը և կապիտուլացիայի ենթարկվեցին:
Ամբողջ Մանջուրիան և Կորեան ազատագրվեցին:
Սովետական զորքերը հաղթական քայլերով մտան
Խարբին, Չան Չուն, Մուկդեն, Պորտ-Արաուր, Դայրեն
և այլ քաղաքներ: Ամեն տեղ նրանց դիմավորում էին
մեծ խանդավառությամբ «ուսաների» և «չանգոների»
բացագանջություններով: Ուր, որ մտնում էին սովե-
տական զորամասերը, նրանց դիմավորելու էր դուրս
գալիս ողջ ժողովուրդը՝ մեծ ից-փոքրը, ծաղիկներ ցա-
նում սովետական զինվորների ճանապարհին և բացա-
գանջում:

— Շանգո՛:

Այն օրը, երբ մեր զորքերը մտան Խարբին, Պենն
ու Յուանը արդեն Խարբինում էին: Նրանք հեշտու-
թյամբ գտան ձկնորս Խու Բեյին՝ պառավի եղբորը:
Իրոք, Խարբինի բոլոր ձկնորսները ճանաչում էին

նրան: Պարզվեց, որ ծերուհւնի ձկնորսը շատ լավ ճանաչում է Էն-Լային:

— Հորեղբայրդ իմ հայրենակիցն է: Մենք միշտ հանդիպում ենք իրար, — ասաց Խու Բեյը Պենին: Ես հիմա մարդ կուղարկեմ նրա ետեւից:

Երեկոյան եկաւ Էն-Լայը: Նա երկար ժամանակ Պենին բաց չէր թողնում գրկից:

— Ահա թե ինչպիսին է իմ եղբոր տղան, — ասում էր նա խփելով Պենի ուսին, — լավ է որ դուք եկել եք, այն էլ այսպիսի ուրախ օր:

— Հորեղբայր, իսկ Ստալինը այստե՞ղ է հիմա, — հարցրեց Պենը: Նա ուրիշ բանի մասին չէր կարողանում մտածել, բոլորից անընդհատ ուզում էր իմանալ Ստալինի, Սովետական Միության մասին:

— Ստալինն այստեղ չէ, բայց Սովետական Բանակը եկել է նրա հրամանով: Նրանք կքչեն այստեղից քսլոր ճապոնացիներին, իսկ մենք չուտով ոտքի կենենք և կքչենք բոլոր հարուստ չինացիներին, մեր ժողովրդի դավաճաններին:

— Ինչպե՞ս է զգում իրեն Յզյա Ֆոն... Այ, չուտով նրա ճաշը կեփենք:

— Նրա ճաշը եփված է արդեն, — ասաց Յուանը նայելով Պենին:

— Ինչպե՞ս, ո՞վ է եփել, — հետաքրքրվեց Էն-Լայը: Նրանք պատմեցին ամեն ինչ: Էն-Լայը գրկեց տղաներին և սկսեց նրանց պատեցնել տան մեջ:

— Ահա թե ի՞նչ խիզախներն եք եղել դուք, իմ փոքրիկներ: Այդպես պետք է վարվել դրանց հետ: Հիմա արդեն, երբ գլխավոր թշնամին ջախջախվել է, մենք պետք է մեր հաշիվները մաքրենք այդպիսիների հետ, որ մեր հողը մեզ մնա, մեր բերքը մեզ մնա:

— Իսկ կլինի՞ր այդպես, — ասաց Պենը:

— Իհարկե կլինի, երբ կան քեզ նման քաջեր, անպայման կլինի:

— Իսկ մենք ուզում ենք...

Եվ Պենը պատմեց Սովետական Միություն և Ստալինի մոտ գնալու իրենց նպատակի մասին:

Էն-Լայը և իմու Բեյը ուշադրությամբ լսեցին, ծիծաղեցին նրանց համարձակ պլանների վրա:

— Իհարկե, Պե'ն, եթե ձեզ հաջողվի գնալ Սովետական Միություն, — ասաց Էն-Լայը, — ձեզ այնտեղ հող էլ կտան, ատուն էլ: Դուք կսովորեք դպրոցում և խելոք մարդ կդառնաք: Բայց չէ՞ որ այդ քիչ է: Դուք մտածում եք ուրեմն միայն ձեր մասին: Իսկ իսկական հայրենասերը պետք է մտածի բոլորի մասին:

Պենը մտաբերեց Չան Չունի կայաքանը, դյուղերի սովահարներին և հասկացավ, որ հորեղբայրը ճիշտ է ասում:

— Այ, Սովետական Միությունը մեզ օգնեց, ջախջախեց ճապոնացիներին: Դրանից հետո մնացածը մենք պետք է անենք: Պետք է խլենք հարուստներից հողը, հանքերն ու գործարանները և վերադարձնենք աշխատավոր ժողովրդին: Ստեղծենք մեր կառավարությունը, աշխատավորական կառավարությունը, այն ժամանակ մեզ մոտ էլ կլինի այնպես, ինչպես Սովետական Միության մեջ: Հասկացա՞ք, սիրելիներ: Դրա համար հարկավոր է կռվել, կռվել ու կռվել:


Պենն ու Յուանը լուռ էին: Նրանք ամեն ինչ հասկանում էին: Այո', պետք է ազատություն բերել ողջ Չինաստանին:

Այդ ժամանակ դրսից լսվեցին որոտընդոտ ձայներ:

Բոլորը դուրս եկան: Խարբիների ժողովուրդը ջահերով դուրս էր եկել փողոց՝ տոնելու մեծ հաղթանակը: Պենն ու Յուանը էն Լայի և իմու Բեյի հետ միասին միացան ցուցարարներին:

Հիմա Պենն ու Յուանը արդեն մեծացել են, և ազատագրական բանակի զինվորներ են: Նրանք կռվելով անցան ամբողջ Մանջուրիայով ու Չինաստանով և հիմա գտնվում են Յան Յզի գետի ափին: Շուտով, շատ շուտով միլիոնավոր չին հայրենասերների հետ, Պենն ու Յուանը ազատություն կբերեն ողջ Չինաստանին:





ԱՎԵԼԻ ՎԱՏԵՐԸ

Քիմն իր հորը չէր հիշում: Նա դեռ չատ փոքր էր, երբ հայրը՝ Յոյ Իր-Սուն գյուղից փախավ: Թե ո՞ւր — ո՛չ ոք չգիտեր:

Հայրիկի մասին Քիմը լսել էր միայն տատից: Տատն ասում էր, թե Յոյ Իր-Սուն իրենց գյուղի ամենաքաջ մարդն էր և նրան գյուղացիները շատ էին սիրում: «Իսկ ինչո՞ւ է փախել», մտածում էր Քիմը և պատճառը չէր գտնում: Տատիկն ասում էր, թե նա փախել է ճապոնացի Սիդեխարայից, բայց Քիմը չէր հասկանում, թե ինչո՞ւ պիտի իր հայրը փախչեր այդ

«Թղուկից»։ Չէ՞ որ նրա բոլը մի Թիզ հազիվ լինե՞ր, դ՛րա համար էլ գյուղացիները նրան «Թղուկ» մականունենն են տվել։

Քիմը շատ բան չէր հասկանում։ Նա դեռ շատ փոքր էր և չգիտեր, որ գյուղի տերը ճապոնացի Սիդեխարան է, որ բոլոր գյուղացիները նրա համար են աշխատում։ Երբ Քիմը մի քիչ մեծացավ՝ իմացավ, որ Սիդեխարան ուզեցել է բանտարկել իր հորը, որովհետև նա իր արտից ստացած ամբողջ բերքը չի տվել Սիդեխարային։ Իմանալով, որ իրեն պիտի բանտարկեն, Յոյ Իր-Սուն գիշերը գյուղից փախել էր։

Շատերն ասում էին, թե նրան բռնել են և բանտաւեցրել, բայց տաաիկը միշտ ասում էր, թե նա մի օր կգա և իր վրեժը կլուծի Սիդեխարայից։

Յոյ Իր-Սուն եկավ բոլորովին անսպասելի կերպով։

Դեռ դաշտում գյուղացիները նրան տեսնելով՝ դարմացան։

— Բանտի՞ց ես գալիս, — հարցրեց նրան մի գյուղացի։

— Ո՛չ, — պատասխանեց Յոյը, — ես Չինաստանում էի, կուլում էի ճապոնացիների դեմ։

Գյուղացիներն ավելի զարմացան։ Հապա ինչպե՞ս է, որ Յոյն անվախ դյուլ է եկել... Իսկ եթե Սիդեխարան իմանա՞ր։

— Սիդեխարայի վերջը եկել է, ասաց Յոյը ժպտալով, — Կորեան շուտով ազատ կլինի։

Եվ նա սկսեց գյուղացիներին պատմել պատերազմի մասին, պատմեց, որ Սովետական Բանակն արդեն ազատագրել է Կորեայի հյուսիսային կեսը և շուտով կազատի իրենց գյուղը։

Գյուղացիները շատ ուրախացան։ Նրանք չըջապատեցին Յոյին և միասին դաշտից դյուլ վերադարձան։

Երբ նրանք անցնում էին ճապոնացու տան մոտով, Սիդեխարան դուրս եկավ պատաշգամբ և Ֆոյին խորը դուրս տալով, տուն հրավիրեց:

— Ո՛նց է կակղել,— ասաց Ֆոյը, առանց Սիդեխարայի բարևին պատասխանելու: Ծուտով մենք դրա հաշիվները կմաքրենք:

Քիմին արդեն ասել էին, թե հայրը դալիս է: Նա չնչասպառ վաղ տվեց հորն ընդառաջ, բայց գյուղացիների խմբին չհասած, շիտթված կանոթ առավ: Նա հորը չկարողացավ ճանաչել:

Ֆոյը Քիմին դրկեց, և նրանք դնացին տուն:

— Ճապոնացիները վերջն եկել է,— ասում էր Ֆոյը գյուղացիներին,— այսուհետև հողը և իշխանությունը մերը կլինի:

Բոլորը «ուռա՛» էին կանչում, ուրախանում: Այդ օրը ողջ գյուղը տոնի մեջ էր:

Մյուս օրը երեկոյան Քիմենց ասանն էին հավաքվել Ֆոյի ընկերները՝ Չոն, Պեկը և Դու-Բոն: Նրանք բոլորն էլ մոռալ էին: Քիմը զարմացել էր: «Ի՞նչ է պատահել,— մտածում էր նա,— երեկ այնքան ուրախ էին, իսկ այսօր...»

Ծալապատիկ նստած խորի վրա, նրանք լուռ ծխում էին իրենց երկար ծխամորճերը: Առաջինը խոսեց Չոն, որ ամենքից մեծն էր.

— Ո՛վ է խնդրել այդ ամերիկացիներին, որ դալիս են: Մենք ուզում ենք որ ռուսները գան:

— Նրանք արդեն ասի են իջել Չեմուլպոյում,— մտազբաղ ասաց Ֆոյը,— և շուտով այստեղ կլինեն:

— Ոչի՛նչ, միևնույնն է,— հանդիստ մեջ մտավ Պեկը,— կարևորն այն է, որ ճապոնացիները չլինեն:

— Ո՛չ,— տաքացավ Չոն,— ո՛չ, միևնույնը չէ՛. ամերիկացիները ոչնչով լավ չեն լինի ճապոնացիներից: Ուրիշ են ռուսները...

— Թուսները որ գան, — ասաց Դու-Ռոն, — ճապոնացիներին դուրս կքշեն, երկիրը մեզ կտան և նորից կտ կգնան, իսկ ամերիկացիները... Մենք դեռ նրանց լավ չենք ճանաչում: Ո՞վ գիտի՝ ինչե՛ր կանեն:

— Նրանք ճապոնացիներից էլ վատ են, — վստահ ասաց Յոյը:

Պեկը, որ ավելի երիտասարդ էր, համաձայն չէր նրանց հետ:

Այսպես, նրանք երկար, մինչև ուշ երեկո անընդհատ ծխում և վիճում էին, իսկ Քիմը մի անկյունում նստած տատիկի կողքին, լուռ լսում էր նրանց: Նա լավ չէր հասկանում նրանից ասածները, բայց զգում էր, որ իր հայրն ու ծերունի Չոն ավելի ճիշտ են ասում:

Մի քանի օր հետո գյուղում տարածվեց, որ ամերիկացիները եկել են և ուղիղ դնացել Սիդեխարայի տուն:

«Գյուղից հեռացնելու են Սիդեխարային» մտածում էին բոլորը: Քիչ հետո բոլոր գյուղացիները հավաքվել էին Սիդեխարայի տան մոտ: Այդտեղ էին նաև Չոն, Յոյը և Պեկը: Քիմը կանգնած էր հոր կողքին:

Ամերիկացի երկու զինվոր կանգնել էին Սիդեխարայի դռների մոտ, իրենց կարճ հրացանները ձեռքներին:

Ներսից անընդհատ ծիծաղի և ուրախության ձայներ էին լսվում: Գյուղացիները զարմացած իրար երես էին նայում և չէին հասկանում, թե ինչ է կատարվում ներսում: Քիմը նայեց հորը: Յոյը մռայլ ծխում էր իր ծխամորճը: Երևում էր, որ նա ոչ մի լավ բան չէր սպասում:

— Ի՞նչ են անում ներսում, — անհանդստացավ Չոն:

— Սատանան գիտե, — չչնջաց Յոյը և դառնությամբ ավելացրեց. — քեֆ են անում երեւի:

Այդ Ժամանակ օրորվելով պատշգամբ դուրս եկավ մի երկարահասակ, նիհար մարդ, երեսայի նման կարճ շալվարը հագին և մտրակը ձեռքին:

«Ամերիկացիներն մեծը», չչուկով իրար հաղորդեցին գյուղացիները: Նրա ետևից ժպտալով դուրս եկան Սիդեխարան և մի կարճահասակ կորեացի:

Երկար սիգարը բերանից չհանելով, ամերիկացին սկսեց խոսել: Ո՛չ ոք նրան չհասկացավ: Երբ նա վերջացրեց իր խոսքը, առաջ եկավ կարճահասակ կորեացին և թարգմանեց նրա սասածները:

— Ես միտար Տոմսոնն եմ: Մենք, ամերիկացիներս, ապատեցինք ձեզ կործանումից: Այսուհետև դուք կենթարկվեք ամերիկացիներին և կաշխատեք մեզ համար: Ես կլինեմ քաղաքում: Որպեսզի գյուղում անկարգություններ չլինեն, ես ձեր գյուղում ավադ եմ նշանակում միտար Սիդեխարային:

Բոլորը ցնցվեցին: Ինչպե՞ս. ճապոնացի Սիդեխարան նորից մնում է գյուղի տե՞րը:

Գյուղացիները չչուկով սկսեցին իրենց դժգոհությունն արտահայտել: «Այս ի՞նչ բան է», «Ինչի՞ համար», «Մենք չե՛նք ուզում»:

Իսկ Սիդեխարան պատշգամբում կանգնած չփում էր ձեռքերը և դոհ ժպտում:

— Հարցեր չկա՞ն, — ասաց միտար Տոմսոնը մտրակն օգուժ թափահարելով:

Նորից լռություն տիրեց:

— Մենք չե՛նք ուզում Սիդեխարային, — ձայն տվեց Քիմի հայրը:

— Ինչպե՞ս, — հարցրեց միտար Տոմսոնը աչքերը չուելով հավաքվածների վրա:

Յոյը մի քայլ առաջ դնաց:

— Գյուղացիները Սիդեխարային չեն ուզում, — ասաց նա, — Սիդեխարան թալանչի է, նա տսրիններ չարունակ ծծել է գյուղացիների արյունը:

— Ո՞վ է այդ մարդը, — հարցրեց միտար Տոմսոնը Սիդեխարային:

— Նա բանդիտ է, — ասաց Սիդեխարան խորը գլուխ տալով, — տաս տարի է՝ նա գյուղում չէր, փախել էր: Նրան ոստիկանութունը որոնում էր, միստր Տոմսոն:

— Ա՛յո՛, բռնել, — հրամայեց Տոմսոնը և Սիդեխարայի զոնների մոտ կանգնած երկու զինվորները հարձակվելով Ֆոյի վրա, իսկույն բռնեցին նրան և ձեռքերը կապեցին:

Բայց Ֆոյը չէր լռում:

— Մենք չենք ուզում Սիդեխարային, ոչ էլ ամերիկացիներին ենք ուզում: Մենք ուզում ենք, որ ռուսները գտնեն:

Քիմը տեսավ, թե ինչպես ամերիկացիները իր հոր թևերը ոլորելով տարան: Նա մի քանի քայլ արեց, որ պեսզի գնա հոր մոտ, բայց Չոն բռնեց նրա թևից:

— Մի՛ գնա, մի՛ գնա տղաս, դրանք չենք են:

— Ուրեմն այսպես, ուրիշ առարկող չկա, — նորից խոսեց միստր Տոմսոնը: — Ձեր գյուղում ավագ եմ նշանակում միստր Սիդեխարային: Նրա խոսքը իմ խոսքն է. իմ խոսքը օրենք է, — ասաց նա և մտրակը թափափահարելով մտավ ներս:

Մոլորված գյուղացիները չգիտեին, թե ինչ ասեն:

Միայն Պեկը մոտենալով Չոյին ասաց.


— Այո՛, սրանք ավելի վատ են, ճապոնացիներից էլ վատ են:

Այս դեպքը տեղի ունեցավ Չեմուլսոյի նավահանգրստից ոչ հեռու մի գյուղում, Հարավային Կորեայում, որը օկուպացվեց ամերիկացիների կողմից:

Հարավային Կորեայի Ժողովուրդը հիմա պարտիզանական ջոկատներ կազմած կռվում է իր անկախության համար: Նրանք ուզում են Հարավային Կորեան

միացնել Հյուսիսային Կորեային, որը Սովետական Բա-
նակն ազատագրեց կորեական ժողովրդի համար:

Այդ ջոկատներից մեկում կռվում են նաև Յոյի
ընկերները՝ Չոն, Դու-Բոն, Պեկը և Յոյի փաթրիկ աղան՝
Գիմը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
1. Թի Թա-նո	3
2. Պատմվածք Լի Վան-Յուի մասին	7
3. Չժու Դեի հրամանքը	14
4. Դեպի երջանկություն	26
5. Ավելի վատերը	56

Պատ. խմբագիր՝ Խ. ՀՐԱԶՅԱՆ
 Տեխ. խմբագիր՝ Ս. ԼԱԹՈՅԱՆ՝
 Կոնտրոլ սրբագրել՝ Հ. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

ՎՓ 01049:

Պատվեր 346:

Տիրած 4000:

Հանձնված է արտադրության 21 IX 1949 թ:

Ստորագրված է տպագրության 21 X 1949 թ:

Հեղինակային 22 մամուլ տպագրական 4 մամուլ:

Հայտարարագրաֆհրատի Գրքի տան տպարան, Երևան, Տեղյան 91, 1949 թ.:

ԳԻՆԸ 3 Ռ.